ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԺԴ. ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ 1918 (ՈՒՐՈՒԱԳԻԾ)

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՑԵԱՆ
anahitas@mail.ru

Հայ-թուրք համակեցութեան պատմութեան հարիւրամեակների ընթացքում հայերը մեծ մասնակցութիւն են ունեցել Օսմանեան կայսրութեան կեանքի տարբեր ասպարէզներին՝ իրենց ստեղծագործ միտքը, աշխատասիրութիւնը եւ շինարար ոգին ի սպաս դնելով տէրութեան գործացմանը։

Երկրի տնտեսութեան եւ մշակոյթի զարգացմանը հայերի մասնակցութեան մասին նիւթը մշակուած է ուսումնասիրութիւնների մակարդակով։ Օսմանեան կայսրութեան գինուած ուժերում հայ տարրին վերաբերող նիւթերը հիմնականում ցրուած են մնում հայ պարբերական մամուլում եւ տարբեր հրատարակութիւններում։ Այս յօդուածում կարելիութեան սահմաններում փորձել ենք ի մի բերել, մէկտեղել դրանք։ Հայ-թուրք համակեցութեան պատմութեամբ զբաղուող պատմաբաններին է թողնւում այս նիւթի առաւել մանրակրկիտ ուսումնասիրութիւնը եւ դրա ամբողջացումը՝ թուրքական եւ օտար աղբիւրներից առնուած փաստերով։

Ցաւոտի իրողութիւն է, որ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող բոլոր ազգերը եւ առանձնապէս քրիստոնեաները ապրել են անտանելի եւ անհանդուրժելի այնպիսի պայմաններում, ուր իւրաքանչիւր քրիստոնեայի կեանքը, ինչքը եւ պատիւը կախուած է եղել առաջին պատահած մահմեդականի քմահաճոյքից։ Ենիչերին իր նոր սրուած սուրը անհաւատ քրիստոնեայի պարանոցի վրա փորձելու արտօնութիւնն է ունեցել[1]։ Քրիստոնեայ հպատակները ստիպուած են եղել համակերպուել երկրում իշխող մահմեդական մոլեռանդութեան եւ բայայի (հօտ, ստրուկ, հարկատու) իրաւազուրկ վիճակի հետ, քանզի օսմանեան վարչակարգի դէմ ցանկացած ընդվզման փորձ կարող էր միայն մեծ աղէտների յանգեցնել իրենց։ Կրօնակից որեւէ պետութեան աջակցութիւնը նրանք չէին կարող յուսալ, քանզի Օսմանեան ամենազօր կայսրութիւնը մինչեւ ԺԷ. դարի վերջը սարսափի մէջ էր պահում Եւրոպայի երկրներին անգամ։

Օսմանեան կայսրութեան բանակում ծառայած հայ գործիչներից շատերը հայ սեղանաւոր ամիրաների, արքունի արհեստապետերի, օսմանեան համակարգում ծառայած պաշտօնեաներից շատերի նման իրենց դիրքը, պաշտօնական շրջանակներում ունեցած կապերը օգտագործել են հայ ազգային եւ եկեղեցական կեանքի պահպանմանը եւ յառաջադիմութեանը նպաստող արտօնագրերի ձեռքբերման համար։ Նրանք նաեւ իրենց նիւթական միջոցներն ի սպաս են դրել հայրենակիցների կեանքի դժնդակ պայմանները թեթեւացնելու համար, ուստի յիշատակութեան արժանի ենք համարել նրանց ազգային գործունէութիւնը նոյնպէս։

ՀԱՑԵՐՆ ԵՆԻՉԵՐԻԱԿԱՆ ԶՕՐԱԳՆԴԵՐՈՒՄ

Գոյութիւն ունի այն տեսակէտը, թէ դարեր շարունակ օսմանեան բանակը հասարակ գինուորներից մինչեւ հրամանատարները՝ ամբողջապէս կազմուած է եղել օսմանցիներից, մահմեդական այլ ազգերից եւ մահմեդականացած քրիստոնեաներից։ Կայսրութեան հպատակ քրիստոնեայ ազգերը որպէս անվստահելի տարրեր՝ չէին գինուորագրւում բանակ եւ զրկուած էին զէնք կրելու իրաւունքից եւ որ ամենակարեւորն է - ըստ շարիաթի սկզբունքների - անհաւատները չէին կարող կրուել հաւատքի բանակում։ Օսմանցիները մշտական նուաճողական պատերազմներ էին վարում, սակայն բաւարար քանակութեամբ ռազմական ոյժ չունէին, քանզի փոքրամասնութիւն էին կազմում իրենց գրաւած տարածքներում։ Քրիստոնեայ հպատակների ռազմական ոյժը գործածելու եւ իրենց ռազմուժի յարաճուն կարիքները բաւարարելու նպատակով՝ սուլթանական իշխանութիւնները հպատակ քրիստոնեայ բնակչութեան հանդէպ սկսեցին կիրառել մարդահարկ՝ դեւշիրմէ (մանկահաւաք, մանկաժողով)։ Սուլթանական իշխանութիւնները քրիստոնեայ բնակչութիւն ունեցող նահանգներից պարբերաբար բռնութեամբ հաւաքագրում էին ամենաուժեղ, բարետես եւ առողջ մանկահասակ տղաներին եւ պատանիներին, որոնց կրօնափոխ անելուց յետոյ ուղարկում էին աջեմի օղլան (բառացի՝ անփորձ պատանի) կոչուած զօրամասերը։ Այստեղ նրանք ձեռք բերելով ռազմական գիտելիքներ ու փորձառութիւն եւ ներշնչուելով կրօնական մոլեռանդութեամբ՝ դառնում էին ռազմարուեստին քաջահմուտ, մահմեդականութեան ու սուլթանին հաւատարիմ գինուորներ եւ ուղարկւում ենիչերիների զօրամասեր[2]։

Օսմանեան բանակի հիմնական ոյժը, նրա ընտրանին կազմող ենիչերական (բառացի՝ նոր զօրք) զօրագնդերը (կանոնաւոր հետեւակ)

ստեղծուել են 1361-1363ին սուլթան Մուրադ Ա-ի (1359-1390) օրօք եւ ամբողջապէս կազմուած էին բռնի մահմեդականացուած քրիստոնեաներից։ Ենիչերիական զօրագնդերը սկզբում հաւաքագրուում էին ռազմագերիներից։ Օսմանեան կայսրութեան կողմից նուաճուած քրիստոնեայ բնակիչները համարուում էին ռազմագերիներ եւ պարտաւոր էին վճարել փենջ-էք (բառացի՝ հինգից մէկը) կոչուած մարդկային հարկատեսակը, ըստ որի իւրաքանչիւր հինգ հոգուց մէկին պարտաւոր էին յանձնել օսմանցիներին՝ բանակի շարքերը համալրելու համար կամ՝ վճարել համապատասխան փրկագին[3]։ Գրաւուած տարածքների ամրագրումից յետոյ քրիստոնեաները դառնում էին օսմանեան հպատակներ եւ նրանց հանդէպ արդէն կիրառուում էր դեւշիրմէ համակարգը[4]։

Մանկահաւաքները Բալկանեան երկրներում կատարուել են աւելի վաղ (1395ին), քան Արեւմտեան Հայաստանում։ Ըստ հայ ժամանակագիրների տուեալների՝ Արեւմտեան Հայաստանում մանկահաւաքները սկսել են 1464ից։ Նախապէս դրանք կատարուել են երեք կամ հինգ տարին մէկ անգամ, իսկ ԺԶ. դարից սկսած՝ իւրաքանչիւր տարին։ Դեւշիրմէի երեքդարեայ ժամանակահատուածում մանկաժողովների պարբերականութիւնը յաճախակիանում էր հենց այն պահերին, երբ Օսմանեան պետութիւնը վարում էր իր նուաճողական պատերազմները։ ԺԷ. դարի երկրորդ կէսից մանկահաւաքների պարբերականութիւնը սկսում է անկում ապրել։ Փաստագրուած վերջին մանկահաւաքը տեղի է ունեցել 1750ին[5]։

Ենիչերիական զօրագնդերը համարուում էին անպարտելի մի կազմակերպութիւն։ Ենիչերիների քաջութեան եւ յանդգնութեան շնորհիւ աշխարհակալ սուլթաններին յաջողուեց ստեղծել զօրեղ կայսրութիւն եւ իրենց միահեծան իշխանութեանը ենթարկել Ասիայի, Ափրիկէի եւ Եւրոպայի ընդարձակ տարածքներում ապրող ժողովուրդներին։

Ցաւոնի չէ, թէ ենիչերիների ծով բազմութեան մէջ որքան է եղել զուտ հայկական տարրը։ Եւ քանի որ չկան փաստացի տուեալներ՝ նրանց քանակը թուապէս հնարաւոր չէ սահմանել։ Հայ ժողովրդի լաւագոյն ներկայացուցիչների բազմաթիւ սերունդներ խլուելով իրենց ազգային միջավայրից՝ ծառայել են յանուն Օսմանեան պետութեան եւ օտար կրօնի յաղթանակի։

Հայկական ծագում ունեցող ենիչերիների մէջ գտնուել են անհատներ, ովքեր իրենց քաջութեան եւ ընդունակութիւնների շնորհիւ կարողացել են բարձրագոյն դիրքեր գրաւել օսմանեան ռազմական եւ վարչական համակարգում։

Հայկական ծագում ունեցող ենիչերիներից նշանաւոր էր ԺԷ. դարի ծովակալ Խալիլ (Հալիլ) փաշան, որն իր սխրագործութիւններով փառապանծ էջեր է թողել օսմանեան տարեգրութեան մէջ։ Խալիլ փաշան կեսարացի հայ էր, որը մանկաժողովների ժամանակ խլուել էր իր ծնողներից եւ Կ.Պոլիս փոխադրուելով՝ հասել էր բարձրագոյն դիրքերի եւ մեծ ծառայութիւններ մատուցել Օսմանեան պետութեանը[6]։ 1609ին մելիտացուց դէմ ծովային մարտից յաղթական դուրս գալով՝ ստացել է վեզիրի տիտղոս, այնուհետեւ նշանակուել է մեծ վեզիր։ Խալիլ փաշան վանել է զազախների արշաւանքը Սինոպից, նորոգել է խաղաղութեան դաշինքը Լեհաստանի եւ Աւստրիայի հետ։ 1619ին կռուել է պարսիկների դէմ եւ Շահ Աբասին ստիպել հաշտութիւն կնքել։ 1620ին դարձեալ պաշտօնանկ է եղել եւ կրկին դարձել ծովակալ։ 1621ին կռուել է Լեհաստանի դէմ։ 1626-1627ին վերահաստատուել է մեծ վեզիրի պաշտօնում[7]։

Հայկական ծագում ունէր ԺԷ. դարի գօրավար եւ պետական գործիչ Միւլէյման փաշա Էրմէնին (1605-1680), որը ծնունդով մալաթիացի է եւ հայ ծնողների զաւակ։ 1605ի մանկահաւաքի ժամանակ տարուել է Կ. Պոլիս, եղել է կրօնափոխ եւ անուանափոխ։ Միւլէյման փաշան իր բնատուր կարողութիւնների, ճարպկութեան եւ քաջութեան շնորհիւ կարողացել է հասարակ զինուորից բարձրանալ մեծ վեզիրի աստիճանի եւ դառնալ օսմանեան պատմութեան կարեւոր դէմքերից մէկը։ Եղել է սուլթան Իբրահիմի (1840-1648) թիկնապահը[8]։ Որոշ ժամանակ անց բարձրանում է վեզիրութեան աստիճանի, այնուհետեւ դառնում վեզիրի խորհրդական, ապա՝ վարում Կարնոյ եւ Սերաստիայի կուսակալութիւնները։ Մասնակցել է Կրետէի գրաւմանը։ 1644ին դարձել է մեծ վեզիր։ Հրաժարուել է մեծ վեզիրի պաշտօնից՝ խռովայոյզ ժամանակներում փրկելով իր կեանքը։ Երկու անգամ վարել է մեծ վեզիրի տեղապահի պաշտօնը։ Եղել է Էդիրնէի (Ադրիանապոլիս) արքունական պալատի վերակացուն։

Միւլէյման փաշան ոչ առաջինն էր եւ ոչ էլ վերջինը բռնի մահմեդականացուած հայերից, սակայն թերեւս միակն էր, որը չթաքցրեց իր ազգային ծագումը եւ Էրմէնին որպէս տիտղոս կրեց իր անուան կողքին իր կեանքի ողջ ընթացքում, անգամ՝ մեծ վեզիրի պաշտօնում[9]։

Վստահ կարելի է պնդել, որ Հալիլ, Միւլէյման փաշաների նման բռնի մահմեդականացուած շատ հայազգիներ են փայլել զինուորական ասպարէզում, սակայն ծառայելով Թրքութեանը՝ ճանաչուել են որպէս Թուրք։ Նրանց անունները կամ մեզ չեն հասել, կամ՝ Թուրքական պատմութիւնը չի կամեցել արձանագրել նրանց ազգային ծագումը։ Այդպէս

յում էին իրրեւ առաջամարտիկներ, ականահատներ, շինարար եւ մեքենագործ վարպետներ[14]:

Հայերը որպէս վարձկաններ ծառայել են նաեւ օսմանեան ռազմա-ծովային նաւատորմում: Նրանց թիւը աւելացել է սուլթան Աբդուլ Համիդ Ա-ի (1771-1788) հայազգի ծովակալ Ճեզայիրլի Հասան փաշայի ծովակալութեան շրջանում[15]: Ռազմական նաւերի թնդանօթաձիգների 75 տոկոսը հայեր եւ յոյներ էին: Ռազմանաւերի անձնակազմի մէջ կային նաեւ հայ դրօշակակիրներ եւն.[16]:

Հասան փաշա Ղազին Ռոդոսթոյի Ս. Խաչ թաղի աղքատ հայ ընտանիքի զաւակ էր, որի ծնողները ստիպուած են եղել փոքրիկ տղային որպէս քէօչէ (ստրուկ) յանձնել Հաջի Օսման անունով մի օսմանցի վաճառականի, որ նրան Հասան անունն է տուել[17]: Երկար շրջան գտնուել է Ճեզայիրում (Ալժիրում), այստեղից էլ՝ նրա մականունը: Իր արտակարգ կարողութիւնների եւ քաջութեան շնորհիւ յայտնի է դարձել որպէս ճարտար վաճառական եւ խիզախ ծովագնաց: Այնուհետեւ ծառայութեան մէջ է մտել օսմանեան ռազմա-ծովային նաւատորմում եւ նշանաւոր դարձել տէրութեանը մատուցած իր մեծ ծառայութիւններով: Մասնակցել է Մալթա կղզու պաշարմանը[18]: Կրում էր ղազի (յաղթող) մականունը: Սուլթան Աբդուլ Համիդ Ա-ի օրօք բարձրացել է վեզիրութեան աստիճանի եւ նշանակուել ծովակալ: Հասան փաշայի նախաձեռնութեամբ կառուցուել են օսմանեան ռազմա-ծովային նաւատորմի մեծ զօրանոցը եւ ռազմական այլ շինութիւններ: Նրա ծովակալութեան շրջանում ծաղկել է նաւաշինութիւնը[19]:

Եւ այսպէս, ենիչերիների զօրաջոկատների կազմաւորման շրջանից մինչեւ ԺԸ. դարի վերջը հայերը որպէս զինուոր մշտապէս ներկայ են եղել օսմանեան բանակում[20]:

ՀԱՅԵՐԻ ՏՈՒՐՔԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Դարերի ընթացքում մեծ չափերի է հասել կայսրութեան քրիստոնեայ հպատակների նիւթական մասնակցութիւնը օսմանեան բանակի զօրացմանը: Դա արուել է հարկերի եւ տուրքերի տեսքով ի տարբերութիւն մահմեդականների, որոնք նման բնոյթի տուրքեր չէին վճարում:

Օսմանեան կայսրութիւնում ոչ-մահմեդական հպատակներից բանակի ծառայութիւնից ազատուելու դիմաց իրրեւ փոխհատուցում գանձւում էր ջեզյէ (գլխահարկ) կոչուող հարկատեսակը[21]:

Ենիչերիների անհաստատ ռոճիկը տրւում էր հպատակներից գանձուող հարկերի հաշուին[22]: Հպատակ ազգերի եւ առանձնապէս քրիս-

տոնեաների վրայ էր ծանրացած ռազմական հարկերի բեռը։ Պատերազմների ժամանակ թուրքական ղեկավարող շրջանակները հպատակներից գանձում էին խմտաատ-ը սեֆերիէ (օգնութիւն արշաւանքի կարիքների համար), խմտաատ-ը ճիհատիէ (ի նպաստ սրբազան պատերազմի) ռազմական հարկերը։ Խաղաղ ժամանակ ի նպաստ բանակի գանձւում էր խմտաատ-ը հազարիէ (բանակին նիւթական, պարենային օգնութիւն) կոչուող մէկ այլ ռազմական հարկատեսակ[23]։

Ոչ-մահմեդականների համար ծանր հարկ էր թերսանէ պեռէյիսի (նաւաշինարանի փոխարէն, նաւակայքի գին) կամ քիւրէկչի պեռէյիէ (թիատուրք) կոչուող հարկը, որը գանձւում էր նաւարանում չծառայելու դիմաց[24]։ Մինչեւ այս հարկի սահմանումը՝ 1610 թուականը, ենիչերիներն անարգել թիարան էին տանում զօրակոչային տարիքի ոչ-մահմեդական տղամարդկանց[25]։

Այս հարկերից զատ, եթէ օսմանեան զօրքերը կանգ էին առնում որեւէ բնակավայրում, ապա տեղի հպատակ բնակչութիւնը պարտաւոր էր հոգալ նրանց սննդի, հագուստի, իջեւանատան եւ այլ կարիքները՝ վճարելով տարբեր անուններով հարկեր եւ տուրքեր[26]։

Այս հարկերի եւ տուրքերի չափերը յստակ սահմանուած չլինելու պատճառով՝ դրանց գանձումը կախուած էր տեղի պաշտօնեաների կամայականութիւններից եւ քմահաճոյքից։

Ըստ օրինի ռազմական հարկերից ազատուած էին կրօնական հաստատութիւնները, հոգեւորականները եւ սուլթանական հրովարտակ ունեցողները։ «Այսուհանդերձ՝ անկէ չէր կրնար խուսափիլ հայ եկեղեցին՝ իր զանազան աթոռներով եւ հաստատութիւններով։ Այսպէս՝ երբ 1792ին Եգիպտոսը գրաւելէ ետք նափոլէոնեան բանակներն իջան ծովեզերեայ շրջանները Պաղեստինին՝ օսմանեան իշխանութիւնները տեղւոյն բոլոր քրիստոնեաները յայտարարեցին անոնց լրտեսն ու գործակիցը։ Նոյնհետայն սկսաւ խժդժութիւնն ու կեղեքումը Երուսաղէմի քրիստոնեաներուն, եւ անոնց հետ՝ հայերուն նաեւ։ Նախ կողոպտուեցան սաղիմաքնակներն ու անոնց կրօնական հաստատութիւնները, եւ քանդուեցան բազմաթիւ եկեղեցիներ։ Անոնց հետ մեծ կորուստներու ենթարկուեցաւ Երուսաղէմի Սուրբ Աթոռը, եւ իր կրած քանդումներէն ետք՝ ենթարկուեցաւ հարիւր քսան զինուորական տուգանքի։ Վանքին աւարառումէն եւ կողոպուտէն ետք՝ կործանեցան Ս. Փրկիչ Եկեղեցին, վանքին ձիթաստաններն ու պարտէզները, եւ բանակատեղիի փոխադրուեցաւ [վերածուեցաւ] մայրավանքը։ Ի վերայ այսր ա-

մենայնի՝ որպէս պատերազմական ծախք՝ օսմանեան զօրավարները բռնի գումարներ կորզեցին...»[27]։

Ռազմաճակատի կարիքները հոգալու նպատակով օսմանցի գինուորները բռնագրաւում ու վաճառում էին նաեւ հայկական վանքերի եւ եկեղեցիների խաչերն ու աւետարանները, աւարի էին ենթարկում հայկական գիւղերն ու բնակավայրերը[28]։

Իրենց սկզբնաւորութեան օրից Օսմանեան կայսրութեան գինուած ուժերը մնացին ռազմաճակատի գծի վրայ եւ պատերազմեցին Բիւզանդական, Պարսկական, Աւստրօ-Հունգարական, Ռուսական, Անգլիական եւ Ֆրանսիական կայսրութիւնների դէմ եւ մշտապէս կարիք ունեցան նիւթական միջոցների ու այդ նպատակի համար դարերի ընթացքում խժդժութիւնների, բռնութիւնների եւ ապօրինութիւնների միջոցով ահռելի չափերի գանձումներ կատարեցին կայսրութեան քրիստոնեայ հպատակներից։

ԲԱՆԱԿԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐ

Օսմանեան կայսրութեան կազմաւորումից դեռ շատ առաջ հայերը յայտնի էին որպէս ճարտար արհեստաւորներ։ Օսմանեան կայսրութիւնում հայ արհեստաւորական դասը բազմացաւ այն ժամանակ, երբ հայերը ենթարկուեցին ոչայլի ճակատագրին եւ նրանց առջեւ փակուեցին պետական կեանքի շատ ասպարէզներ, քանզի կառավարելու իրաւունքը մահմեդականի մենաշնորհն էր։ Դարեր շարունակ Օսմանեան կայսրութեան ցամաքային զօրքերում եւ ռազմա-ծովային նաւատորմում մշտապէս բանակին սպասարկող հայ արհեստաւորների մի հսկայ բազմութիւն է եղել։

«Բարձրորակ արհեստաւորներ էին հայ զինագործները. նրանք պատրաստում էին սուր, հրացանի փող, նորոգում էին զէնքի այլեւայլ տեսակներ։ Զէնքին եւ ռազմական գործողութիւններին, ինչպէս եւ բանակի սպասարկմանն առնչուող արհեստաւորները կազմում էին բանակի բաղկացուցիչ մասը եւ ուղեկցում էին նրան ամբողջ արշաւի ընթացքում։ Ֆերիդուն բէյի մի տեղեկութեան համաձայն՝ բանակում գործում էին ռազմական գործին առնչուող հազարաւոր թամբագործներ, դերձակներ, երաժիշտներ եւ բազմաթիւ այլ արհեստաւորներ։ Բանակին ծառայող արհեստաւորները եւ առեւտրականները ազատում էին հարկերից, որը արհեստաւորների համար նիւթական յաւելեալ հնարաւորութիւններ էր ստեղծում»[29]։

1571ի Կիպրոսի գրաւման ժամանակ օսմանեան բանակին ուղեկցում էին ռազմական շինութիւններ կառուցող բազմաթիւ հայ շինարարներ, քարագործ վարպետներ, հիւսներ եւ այլ արհեստաւորներ։ 1669ին Կրետէ մտած օսմանեան զօրքին ընկերակցող մեծաթիւ հայ արհեստաւորներին ուղեկցում էր նոյնիսկ Տ. Յակոբ անունով քահանայ՝ քահանայագործելու համար[30]։

Էլլիա Չելեպին իր Ուղեգրութիւնի մէջ յիշատակում է, որ ԺԷ. դարում կեսարացի հայերի պատրաստած ականներով էր օսմանեան բանակը պայթեցնում թշնամիների պարիսպներն ու բերդերը[31]։

Պատերազմների ժամանակ հայ բնակչութիւնը ստիպուած էր աշխատել բերդերի, ճանապարհների շինութեան կամ վերանորոգման վրայ։ Այդ մասին են վկայում հայերէն ձեռագրերի բազմաթիւ յիշատակարաններ։ Այսպէս, 1556ին ումն Հիւսէյին փաշայի հրամանով Վանի եւ Արճէշի հայ բնակչութիւնը անվարձայատոյց աշխատանքով մէկուկէս տարուայ ընթացքում կառուցեց ռազմական ամրութիւններ[32]։

Օսմանեան կայսրութեան վառօդարանները (զինագործարանները), որոնք վառօդ էին պատրաստում օսմանեան ողջ բանակի համար եւ այդ օրերին բացառիկ կարեւորութիւն ունէին երկրի համար՝ շուրջ մէկ դար պատկանում էին Տատեան ամիրայական տոհմի անդամներին։ Նրանք փայլեցին իրենց գիւտարարութեամբ եւ մասնագիտական հմտութեամբ եւ վառօդարանը վերածեցին երկրի լաւագոյն եւ օրինակելի պետական հաստատութեան։ Բազմաթիւ գիւտերի հեղինակ Առաքել ամիրան (1753-1812) որպէս ճարտար մեքենագործ հետզհետէ կատարելագործել է վառօդի արտադրութիւնը։ Իր հնարամտութեամբ պատրաստել է անիւաւոր նաւ եւ զանազան այլ մեքենաներ[33]։ Առաքել ամիրայի մահից յետոյ նրա տեղը գրաւեցրել է գաւակը՝ Սիմոն բէյ Տատեանը (1770-1832), որը վառօդարանում ցուցաբերել է մեծ հմտութիւն եւ ձեռներէցութիւն։ Նրա օգնականն էր կրտսեր եղբայրը՝ Յովհաննէս բէյը (1798-1869), որ երկրի ռազմական արդիւնաբերութիւնը կատարելագործելու նպատակով երկու անգամ մեկնել է Եւրոպա։ Յովհաննէս բէյը գնահատուել է եւրոպական գիտական շրջանակներում՝ ընտրուելով Լոնդոնի, Փարիզի, Էդինբուրգի մի շարք ընկերութիւնների պատուոյ անդամ։ Սան-Ստեֆանոյի վառօդարանի վերատեսչութիւնը յանձնուած էր Պօղոս բէյ Տատեանին (1800-1863), որ Յովհաննէս բէյի մահից յետոյ նոյնպէս վարել է Կ.Պոլսի վառօդարանը։ Տատեանների պատրաստած վառօդը չէր զիջում եւրոպականին։ Այն բարձր է գնահատուել Ղրիմի պատերազմի ժամանակ՝ անգլիացի եւ ֆրանսիացի զօրավարների կողմից։

Տատեանները ղեկավարել են նաեւ երկրի թղթի արդիւնաբերութիւնն ու բանակի հանդերձաւորման գործը։ Ռազմական նախարարութեան ստեղծմամբ վերացաւ վառօդարանը, սակայն Տատեան տոհմի շառաւիղները շարունակեցին ծառայել երկրին եւ որպէս բարձրաստիճան պաշտօնեաներ՝ պահպանեցին իրենց ազդեցիկ դիրքն արքունիքում։ Տատեանները բացառիկ դեր կատարեցին ինչպէս պետական, այնպէս էլ ազգային կեանքում։ Նիւթապէս սատարել են Կ.Պոլսի եկեղեցիներին եւ դպրոցներին, գործուն մասնակցութիւն են բերել պոլսահայ համայնքի կեանքին։ Նրանք ազգին մատուցած ծառայութիւններով պատուաւոր տեղ ունեն Կ.Պոլսի հայ համայնքի պատմութեան մէջ[34]։

Հայ գինագործ վարպետներն էին պատրաստում ենիչերիների զէնքերը։ Կ.Պոլսում մեծ հռչակ ունէին կարնեցի գինագործները։ Գինագործ վարպետ Սարգիս Աճէմեանը արուեստի մակարդակի էր հասցրել գինագործութիւնը։ Նա էր պատրաստում սուլթան Մահմուդ Բ.-ի (1806-1839) սրերը։ Սարգիս Աճէմեանի աշխատանքները ցուցադրուած են Ստամբուլի Թոփգափուի պալատում, Նիւ Եորքի Մետրոպոլիտէն եւ Աթէնքի Բենաքի թանգարաններում[35]։

Օսմանեան ռազմանաւերի վարպետները հիմնականում հայեր եւ յոյներ էին։ Կայսրութեան նաւարանի դարբնապետութեան պաշտօնը ԺԸ.-ԺԹ. դարերում յանձնուած էր Տեմիրճիպաշեան ընտանիքին։ Մուստաֆա Գ.-ի (1758-1773) գահակալութեան առաջին տարիներին Գէորգ Տեմիրճիպաշեանը դառնում է արքունի նաւատորմի նաւայարդարապետը եւ թնդանօթարանի վերատեսուչը, որը նախկինում վարում էր հայազգի Մարտիրոս վարպետը։ Գէորգը փայլել է իր գիւտարարութեամբ։ Նա է հնարել նաւի այժմեան խարիսխը, որը եւրոպացիների կողմից գնահատուելով՝ գործածութեան մէջ է դրուել։ Գէորգի ձեռքով դարբնած խարիսխը աւելի քան մէկ դար՝ մինչեւ Ի. դարի սկիզբը՝ ցուցադրուած մնաց օսմանեան նաւատորմի հրապարակում[36]։ Գէորգը կրում էր պռանեղը-պաշը տիտղոսը։ Սա ենիչերիական մի կարգ էր եւ իր ենթակայութեան տակ ունէր 4000 ենիչերի։ Գէորգի մահից յետոյ նրա գործը շարունակել են զաւակները։ Տեմիրճիպաշեան տոհմից Ենովքը զբաղուել է նաեւ արքունի նաւատորմի, ցամաքային զօրքերի եւ պալատի հացի մատակարարման գործով։ Ենովք Տեմիրճիպաշեանը ազգային կեանքում յայտնի է նախ որպէս Գերագոյն ժողովի, այնուհետեւ Ազգային Սահմանադրութեան հիմնադիրներից մէկը[37]։

Թուրքիոյ եւ Մերձաւոր Արեւելքի առաջին թատրոն-կրկէսի՝ Արամեան թատրոնի հիմնադիր Յովհաննէս Գասպարեանի հայրը՝ դարբին Հաջի Գասպարը օսմանեան թնդանօթարանի վերատեսուչն էր[38]:

Օսմանեան բանակում հայ արհեստաւորների կատարած դերի մասին պատկերացումն ամբողջացնում է սովետական դեսպան Ա. Ի. Արալովի պատմածը: 1922ին Մուստաֆա Քեմալի վարած պատերազմական գործողութիւնների ժամանակ նա այցելել է դարբինների զինուորական դպրոց եւ զարմացել, որ Անատոլիայում թուրքերը չեն ունեցել իրենց դարբինները: Ձիերին մշտապէս պայտել են հայ եւ յոյն արհեստաւորները: Եւ քանի որ, բնաջնջուել կամ երկրից վտարուել էին հայերն ու յոյները՝ ձիերը ոչ-պիտանի էին դարձել անորակ պայտումների պատճառով: Եւ ահա, բանակում ստեղծուել էին կարճատեւ դպրոցներ՝ դարբնի արհեստը թուրքերին սովորեցնելու համար[39]:

ԲԱՆԱԿԻ ՀԱՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ

Օսմանեան բանակի հիմնական մատակարարները հայ վաճառականներն էին: ԺԲ. դարից սկսած հայերը կարեւոր դիր էին միջազգային առեւտրում, քանզի նրանք էին Ասիայի եւ Եւրոպայի վաճառականութեան մեծագոյն միջնորդը: Հայ առեւտրականները խիզախ էին, նախաձեռնող եւ սովոր յաղթահարելու ամէն տեսակի դժուարութիւն: Օսմանեան կայսրութիւնում հայերի առեւտրական դառնալու պահանջը ի յայտ էր գալիս այն իրողութիւնից, որ օսմանցիները, լինելով պաշտօնեայ կամ զինուորական, մեծ կարիք չէին զգում առեւտրական կամ արհեստաւոր դառնալու: Առեւտրով եւ արհեստով զբաղուելը նրանք համարում էին անարգ եւ ստորին զբաղմունք՝ վայել միայն ստրուկներին եւ գերիներին: Այդ մտայնութեամբ առեւտուրն ու արհեստները թողնուած էին կայսրութեան ոչ-թուրք տարրերին[40]:

Մեծահարուստ վաճառական Յովհաննէս բէյ Խանազատը սուլթան Մուրադ Դ-ի (1622-1639) զօրաբանակի պարէնի մատակարարն էր: 1638ին նա մասնակից է եղել օսմանեան բանակի կողմից Բաղդադի գրաւման համար տեղի ունեցած ճակատամարտին: Իր ծառայութիւնների համար սուլթանը նրան շնորհել է պատուանշաններ, բէյութեան տիտղոս եւ Կիլիկիոյ հայկական Ս. Խաչ, Նուշաւան, Օշնաշէն գիւղերը[41]:

Աբրահամ չելեպի Ապրոյեանը 1646ի Կրետէի գրաւմանը մասնակցող օսմանեան բանակի մատակարարն էր[42]: Բանակին մատուցած ծառայութիւնների համար սուլթան Իբրահիմի (1639-1648) յատուկ հրովարտակով Աբրահամին շնորհուել է ամբողջ կայսրութիւնում ազատ առեւ-

տուր անելու արտօնութիւն։ Մեծ եպարքոս Քէօփիւրլիւ օղլու Մեհմէդ փաշայի հրամանով նրան չնորհուում է չելեպի պատուանունը։ Օսմանեան կայսրութեան պետական շրջանակներում ունեցած իր ազդեցութիւնն Աբրահամ (Ապրօ) Չելեպին օգտագործել է ազգօգուտ նպատակների համար։ Նա Կրետէ կղզում հայերի համար տեղաբնակներից գնել է Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցին, իր կալուածքներով։ 1666ին Ապրօ Չելեպին տեղափոխուել է Կ.Պոլիս եւ իր սեփական միջոցներով վերանորոգել հրդեհի պատճառով վնասուած Ս. Նիկողայոս եւ Ս. Սարգիս եկեղեցիները։ Ցամաք ջանքերի չնորհիւ կարողացել է օսմանեան իշխանութիւններից ստանալ Մակեդոնիայում հայերի մշտական բնակութեան եւ եկեղեցի ունենալու արտօնութիւնը[43]։

Մանուկ բէյ Միրզայեանը (1769-1817) օսմանեան Դանուբեան զօրքի հրամանատար Մուստաֆա փաշա Բայրաքդարի խորհրդականն էր։ 1806-1812 ռուս-թուրքական պատերազմի ժամանակ օսմանեան զօրքի պարէնաւորումը եւ ռազմական նշանակութիւն ունեցող կառոյցների նորոգութեան գործը յանձնուած էր Մանուկ բէյին։ Բացի այդ, Բայրաքդարը նրան էր լիազօրել հաշտութեան բանակցութիւններ վարել ռուսների հետ։ Այս մեծ դիւանագէտի եռանդուն ջանքերի չնորհիւ են կայացել ռուս-թուրքական հաշտութեան բանակցութիւնները, որի արդիւնքում 1812ին կնքուել է Բուխարեստի հաշտութեան պայմանագիրը, որով եւ ձախողուել են այս երկու պետութիւններին պատերազմի ներքաշելու Նապոլէոն Բոնապարտի ծրագրերը[44]։ Մանուկ բէյը աջակցել է Մուստաֆա փաշա Բայրաքդարին՝ տապալելու ենիչերիների վարչակարգը։ Վերջինիս իրականացրած յեղաշրջմամբ ետ մղուեցին կայսրութեանը սպառնացող վտանգները եւ 1808ին գահ բարձրացաւ երկրում բարենորոգչական շարժման սկզբնաւորող Մահմուդ Բ.ը։ Օսմանեան տէրութեանը մատուցած ծառայութիւնների համար Միրզայեան Մանուկ բէյը սուլթանից ստացել է Մոլդովայի իշխանի տիտղոսը եւ նշանակուել պալատի դրագոմանի (դիւանագիտական թարգման՝ արտաքին գործոց նախարարի օգնականի մակարդակով) պաշտօնում[45]։

Ղրիմի պատերազմի (1853-1856) ժամանակ խարբերդցի Հաջի Օհան Եաղճեանը ստանձնել էր օսմանեան բանակի պարէնաւորման գործը։ Բանակին մատուցած ծառայութիւնների համար սուլթանի կողմից կանչուել է Կ.Պոլիս եւ արժանացել մեծարանքների, պատուանշանների, պաշտօնական սրի եւ համազգեստի։ Կ.Պոլսից վերադառնալուց յետոյ իր հետ բերել է Քեսիրիկ գիւղի եկեղեցու եւ վանքերի վերաշինութեան արտօնագրերը[46]։ Սերաստացի յայտնի վաճառական Ցարութիւն Պալագ-

չեանը Ղրիմի պատերազմի ժամանակ նոյնպէս գրաղուել է օսմանեան բանակի մատակարարման գործով[47]։ Յարութիւն Ասլանեանը (1852-1917) եղել է օսմանեան Ծովային նախարարութեան մատակարարը։ Նա վարել է նաեւ ծովային երթեւեկութեան խառիջ մախառաէի (պետական յատուկ սպասարկութեան) վարիչի պաշտօնը։ Ունեցել է ազգային գործունէութիւն[48]։ Գրիգոր Շապանեանը 1865ին վարել է արքունի գօրքերի պէտքերի եւ պարէնի, ընդհանուր պաշարների մատակարարի պաշտօնը։ 1877-1878 ռուս-թուրքական պատերազմի տարիներին Օսմանեան ընդհանուր բանակի պէտքերը հոգացող մասնաժողովի անդամ է նշանակուել եւ իր պաշտօնական պարտականութիւնների կատարման համար արժանացել է շքանշանների ու ունեցել պաշտօնի բարձրացում[49]։ Խարբերդցի յայտնի վաճառական Պօղոս Իգնատիոսեանը ԺԹ. դարի 70-80ականներին գրաղուել է օսմանեան բանակի հանդերձանքի մատակարարման գործով[50]։ Յայտնի բարերար Արիկ Ունճեանի վրայ էր դրուած օսմանեան Բ. գօրարանակի, իսկ այնուհետեւ Ռազմական նախարարութեան ընդհանուր պաշարների մատակարարի պաշտօնները[51]։

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐ

Թէ՛ Թանզիմաթի (1839 թ.) ընձեռած հնարաւորութիւնների շնորհիւ, եւ թէ՛ երկրում թուրք բժիշկների սակաւութեան պատճառով՝ Եւրոպայի համալսարաններում ուսանած հայ բժիշկները սկսեցին ծառայել օսմանեան բանակում։ 1841ից սկսած ոչ-մահմեդականներին արտօնուեց ուսանել Կայսերական Զինուորական Բժշկական Վարժարանում (ԿԶԲՎ), որը բացուել էր 1838ին սուլթան Մահմուդի արքունի բժիշկ Մանուէլ Շաչեանի նախաձեռնութեամբ[52]։ Վարժարանը համապատասխանում էր իր ժամանակի գիտական պահանջներին եւ գործում էր եւրոպական համալսարանների կրթական ծրագրով։ Վարժարանի ուսուցչապետն էր Վիեննայի Համալսարանից հրաւիրուած դոկտոր Բերնարը։ Դասաւանդումը մինչեւ 1869 թուականը կատարւում էր Ֆրանսերէն։ Իր սկզբնաւորութեան առաջին շրջանից ԿԶԲՎի սիւներն էին հայ, յոյն եւ Ֆրանսիացի դասախօսները։ Այս եւ 1865ին բացուած Քաղաքային Բժշկական վարժարանները ունեցել են 21 հայ բժիշկ-դասախօսներ։

ԿԶԲՎի ընթացաւարտ բժիշկներն ու դեղագործները զինուորական աստիճաններով ծառայեցին օսմանեան բանակում[53]։ Նրանք մասնակցել են օսմանեան բանակի ռազմական գործողութիւններին ու պատերազմներին եւ իրենց մեծ աւանդն են բերել բանակում բուժսպասարկման գործի կազմակերպմանը։ Հայ զինուորական բժիշկներից շատերը

դասաւանդել են ԿՋԲՎում՝ օսմանեան բանակի եւ երկրի համար պատրաստելով բժիշկների բազմաթիւ սերունդներ։ Նրանց նախաձեռնութեամբ հիմնուել է Կայսերական Բժշկական Ընկերութիւնն (ԿԲԸ) ու Կարմիր Մահիկը։ Հայ բժիշկներից աւելի քան 170 բարձրաստիճան սպաներ արժանացել են փաշայի եւ բէյի տիտղոսների։

Փաշայի տիտղոսին էին արժանանում միւշիրի զինուորական աստիճան ունեցողները, որը համապատասխանում էր մարշալի աստիճանին (մարաջախտին)։ Ֆերիքները եւրոպական բանակների զօրաբաժնի (division) եւ կիսաբաժնի (brigade) զօրավարներն էին։ Պէյլէրպէյին, միրլիւան եւ միրմիրանը օսմանեան բանակի յատուկ զինուորական աստիճաններ էին։ Պէյլէրպէյին համապատասխանում էր բդեշխութեան, միրլիւան՝ զօրապետութեան, իսկ միրմիրանը՝ հրամանատարութեան աստիճաններին[54]։ Դրանց յաջորդում էր միրալայը (գնդապետ), որը բէյի տիտղոսն էր ունենում[55]։

Անդրանիկ փաշա Կրճիկեան (1819-1894)

1855-1856 տարեշրջանում սովորել է Կ.Պոլսի ԿՋԲՎում եւ աւարտել հարիւրապետի աստիճանով։ Բնագիտութիւն է ուսումնասիրել Փարիզի համալսարանում։ Որոշ ժամանակ Անգլիայում եւ Իտալիայում իր մասնագիտութեան մէջ հմտանալուց յետոյ՝ վերադաձել է Կ.Պոլիս եւ 1874ից մինչեւ իր կեանքի վերջը բնագիտութիւն դասաւանդել ԿՋԲՎում եւ Քաղաքային Բժշկական Վարժարանում։ Մի շրջան եղել է Բժշկական Քաղաքային Վարժարանի ներքին տնօրէն եւ այդ պաշտօնում ունեցել է բացառիկ բեղուն եւ օգտաշատ գործունէութիւն։ Իր պարտականութիւններին գիտակից ու անձնուէր ուսուցիչը հակառակ իր յառաջացած տարիքին՝ շարունակել է դասախօսել։ Երկար շրջան նրա պատրաստած բնագիտութեան երկհատոր դասագրքերով են ուսանել թուրք ուսանողները[56]։ 1884ին զինուորական աստիճանի բարձրացումով՝ արժանանում է փաշայի տիտղոսի։

Մասնակցութիւն է ունեցել ազգային կեանքին։ 1863ին եւ 1876ին ընտրուել է Քաղաքային Ժողովի անդամ եւ ատենադպիր։ Հեղինակն է Առողջապահութիւն եւ Առողջ Ապրելու Մասնաւոր եւ Ընդհանուր Կանոններ գրքի[57]։

Ստեփան փաշա Ասլանեան (1822-1901)

1846ին սուլթան Արդուլ Մեջիդի ներկայութեամբ յանձնուել են Կ.Պոլսի ԿՋԲՎի շրջանաւարտների վկայականները։ Նրանցից ամենալաւագոյնը՝ Ստեփան Ասլանեանը եւ մի քանի նորաւարտ բժիշկներ սուլթանի հրամանով ուղարկուել են Վիեննա՝ իրենց մասնագիտական ու-

սումը կատարելագործելու։ Ստեփան Ասլանեանը 21 տարի դասաւանդել[58] է ԿՋԲՎում, որի ամենափայլուն դասախօսներից մէկն էր՝ փայլուն իր բացառիկ դասախօսութիւններով, մասնագիտական խորը իմացութեամբ ու հմտութեամբ։ 1870ին բարձրացուում է միրյիւայի աստիճանի, արժանանում փաշայութեան տիտղոսին եւ փոխադրուում Ռազմական նախարարութիւն եւ դառնում Զինուորական Կենտրոնական Մեծ Ժողովի Առողջապահական Բաժնի անդամ։ Արժանացել է Օսմանիէի եւ Մեջիդիէի տարբեր աստիճանի շքանշանների եւ օտար երկրների կառավարութիւնների պատուանշանների[59]։

1878ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ ռուսական բանակը հասել էր Ադրիանապոլիս՝ մեծ եպարքոս Սաւֆէթ փաշան գնում է այնտեղ՝ նախնական դաշնագրութիւն կնքելու։ Ստեփան փաշա Ասլանեանն իբրեւ բժիշկ-թիկնապահ ընկերակցել է մեծ եպարքոսին։ Ներսէս Պատրիարքի ու բժիշկ եւ հասարակակարան գործիչ Սերովբէ Վիչէնեանի (Սերվիչէն) խնդրանքով աշխատել է Ռուսական տէրութեան ուշադրութիւնը հրաւիրել հայ ազգի վրայ եւ ջանացել Սան-Ստեֆանոյի պայմանագրի մէջ դնել 16րդ յօդուածը, ըստ որի Օսմանեան կայսրութեան հայկական գաւառների բարեկարգութեան հարցը դրուում էր Ռուսաստանի վրայ։

Ստեփան փաշա Ասլանեանը գործուն մասնակցութիւն է ունեցել ԺԹ. դարի երկրորդ կէսի արեւմտահայութեան հանրային կեանքին։ Թէեւ նա Ազգային Սահմանադրութեան հեղինակներից չէր, սակայն լուռ եւ ծածուկ աջակցել է խմբագրական յանձնաժողովին։ Ընտրուել է ազգային երեսփոխան, եղել Ազգային Ընդհանուր եւ Քաղաքական ժողովների ատենապետ։ Մինչեւ 1891 անդամակցել է նաեւ այդ ժողովներին եւ ունեցել արդիւնաւէտ գործունէութիւն։ Աւելի ուշ, նա ամբաստանուել է թուրքերի կողմից իբրեւ օսմանեան գահի դաւաճան եւ շնորհազուրկ եղել։ Հրաժարուելով զինուորական ասպարէզից՝ կամովին աքսորուել է Եգիպտոս, ապա՝ Ֆրանսիա։ Եգիպտոսում եղել է խդիւի (փոխարքայի) ընտանեկան բժիշկը։ Միայն Ցարութիւն փաշա Տատեանի միջնորդութեան շնորհիւ է կարողացել վերադառնալ Կ.Պոլիս[60]։

Գաբրիէլ փաշա Սեւեան (1822-1900)

Օսմանեան ռազմա-ծովային նաւատորմի առաջին հայ զինուորական բժիշկն էր։ 1849ին փայլուն քննական արդիւնքներով աւարտել է Կ.Պոլսի ԿՋԲՎը։ Եղել է սիրիական ափերում տեղակայուած կայսերական ռազմա-ծովային նաւատորմի գլխաւոր բժիշկը։ Որպէս բժշկապետ տարբեր մարտանաւերում մասնակցել է ռազմական գործողութիւննե-

րի։ Հմուտ եւ բազմավաստակ հայ բժիշկը տէրութեանը մատուցած ծառայութիւնների համար հասել է միրիւշայի գինուորական աստիճանի եւ արժանացել փաշայութեան տիտղոսի։ 1865ի հնդախտի մեծ համաճարակի վերացմանն ուղղուած իր արդիւնաւէտ գործունէութեան համար արժանացել է սուլթանական գնահատութեան եւ պարգեւատրուել Օսմանիէի եւ Մեջիդիէի տարբեր աստիճանների շքանշաններով։ Անդամակցել է Կ. Պոլսոյ ԿԲԼԻ, Ռազմա-ծովային Նաւատորմի Բժշկական եւ Բարձրագոյն Դրան Առողջապահական Կայսերական խորհուրդներին։ Օսմանեան կայսրութեան Կարմիր Մահիկի հիմնադիրներից է[61]։ Հեղինակ է գիտական աշխատութիւնների, եւ ունեցել է գրական եւ հասարակական գործունէութիւն։ Վարել է Կ. Պոլսի Ս. Գրիգոր Լուսաւորչեան Վարժարանի հոգաբարձութեան ատենապետի պաշտօնը։ 50 տարի Օսմանեան տէրութեանը ծառայելուց յետոյ 1897ին Գաբրիէլ փաշա Սեւեանը հանգստի է կոչուել[62]։

Կարապետ փաշա Իսկենտէրեան (1835-1910)

Աւարտել է Կ.Պոլսի ԿՋԲՎ՝ հազարապետի աստիճանով։ Դասաւանդել է նոյն վարժարանում։ Եղել է Սելանիկում տեղակայուած Օսմանեան բանակի բժշկապետը[63]։ Հասել է միրիւշայի աստիճանի եւ արժանացել փաշայի տիտղոսի, Մեջիդիէի Դ. եւ այլ շքանշանների[64]։

Տիգրան փաշա Փեշտիմալճեան (1837-1894)

Մասնագիտական կրթութիւնը ստացել է Փարիզի Բժշկական Համալսարանում։ Սուլթան Արդուլ Համիդ Բ.ն (1876-1909) գնահատելով Տիգրան Փեշտիմալճեանի բժշկի տաղանդը՝ նրան դարձրել է իր խորհրդատու բժիշկը։ 1869ին ընտրուել է ԿԲԼԻ անդամ։ Յետագայում վարել է նախագահի պաշտօնը։ Անդամակցել է նաեւ Ֆրանսիայի Առողջապահական Ընկերութեանը։ Զինուորական աստիճանի բարձրացումով արժանացել է փաշայի տիտղոսի։ Իր խղճամիտ գործունէութեան համար գնահատուել է թէ՛ ազգային եւ թէ՛ պետական շրջանակների կողմից։ Տիգրան փաշա Փեշտիմալճեանը հայ վերածնդի ամենապայծառ դէմքերից էր[65]։ Մշտապէս սատարել է ազգային բարեսիրական հաստատութիւններին եւ յատկապէս գուրգուրանքով է վերաբերուել իր ծննդավայր Խասգիւղի Ս. Ներսէսեան Վարժարանին։ Աշխատակցել է Կ.Պոլսի ու Կովկասի հայ մամուլին։ Որպէս հրապարակագիր Արեւելք, Մասիս եւ Փարոս Հայաստանի պարբերականներում հրատարակել է Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի տնտեսական զարգացման հեռանկարներին առնչուող յօդուածներ։ Հրատարակել է նաեւ բժշկութեանը նուիրուած աշխատութիւններ[66]։

Վահան փաշա Մանուէլեան (1847-1902)

Վահան փաշան որդին է համբաւաւոր գիտնական Յակոբիկ Մանուէլեանի։ 1872ին աւարտել է Կ. Պոլսի ԿՋԲՎն։ Այնուհետեւ կառավարութեան կողմից ուղարկուել է Փարիզ՝ մասնագիտական ուսումը կատարելագործելու[67]։ 1880ին կարգւում է Կ. Պոլսի Ախտաբանական Բուժարանի ուսուցչապետ Միքայէլ Խորասանճեանի օգնական բժիշկը։ Փորձառու եւ հմուտ դասախօսի յատկութիւններով օժտուած Վահան Մանուէլեանը եղել է ԿՋԲՎի առաջնակարգ մանկավարժներից։ Եղել է պալատական բժիշկ եւ թուրք աւագանու մօտ մեծ հռչակ եւ համբաւ է վայելել[68]։ 1900ին հասել է միրլիւայի աստիճանի եւ ստացել փաշայի տիտղոս։ Երկար տարիներ Գուգկունճուկի եւ Օրթագիւղի Թաղական Խորհուրդների ատենապետն էր[69]։

Անտոն փաշա Նաֆիլեան (1834-1912)

1854ին հարիւրապետի աստիճանով աւարտում է Կ.Պոլսի ԿՋԲՎն։ Ղրիմի պատերազմի ժամանակ ծառայել է օսմանեան բանակում, իսկ այնուհետեւ ծառայութիւնը շարունակել է Կրետէում։ 1858ին մեկնել է Փարիզ եւ ուսումը շարունակել տեղի Բժշկական համալսարանում։ 1863ին վերադարձել է Կ.Պոլիս եւ նշանակուել սուլթանի անձնապահ գնդի բժիշկ։ 1869ին ծառայութեան մէջ է մտնում ԿՋԲՎի մաս կազմող Հայդարփաշայի հիւանդանոցում։ 1877ին ուղարկւում է թուրք-սերբական ռազմաճակատ։ 1887ին սուլթանական հրամանով Անտոն Նաֆիլեանը ԿՋԲՎի թուրք ուսանողների ստուար մի խմբի բժշկութեան տարբեր ճիւղերում հմտացնելու նպատակով՝ տանում է Փարիզ։ 1891ին վերադառնում է Կ.Պոլիս եւ ծառայութեան անցնում Հայդարփաշայի զինուորական հիւանդանոցում, որպէս բժշկապետ։ Անտոն փաշան երբեք չի դասախօսել Կ.Պոլսի ԿՋԲՎում, սակայն հիւանդանոցներում հիւանդների կողքին վարժարանի ուսանողներին դասաւանդել է գործնական վիրաբուժութիւն։ Երկու անգամ ընտրուել է ԿԲԼի անդամ։ 1887ին բարձրացել է ֆերիքի աստիճանի եւ արժանացել փաշայութեան տիտղոսի։ Սուլթանական հրամանագրով արժանացել է Մեջիդիէի, Օսմանիէի տարբեր կարգի ակնառու պատուանշանների[70]։

Տիրան փաշա Փափազեան (1858-1926)

1882ին աւարտել է Կ.Պոլսի ԿՋԲՎն։ Ծառայել է զինուորական տարբեր հիւանդանոցներում եւ աստիճանաբար ունենալով զինուորական աստիճանի բարձրացում՝ արժանացել է փաշայի տիտղոսի։ 1912ին Բալկանեան պատերազմի ժամանակ ծառայել է Ռոդոսթօ եւ Քըրքլարելի քաղաքներում տեղակայուած ճակատային հիւանդանոցներում։ Յետա-

գայ տարիներին գտնուել է Բաղդադում եւ Դամասկոսում՝ իբրեւ բժշկապետ օսմանեան Գ. զօրաբանակի։ Ա. աշխարհամարտի աւարտից յետոյ հանգստի է կոչուել[71]։

Տիգրան փաշա Պապայեան (1861-1939)

1882ին աւարտել է ԿՊԲՎն։ Եղել է արքունի բժիշկ։ 1893ին Բեռլին մեկնած կառավարական պատուիրակութեան կազմում էր։ 1902ին ստացել է միրմիրանի զինուորական աստիճան եւ փաշայի տիտղոս։ Անդամակցել է Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութեանը[72]։

Յակոբ բէյ Տաւուտեան (Տաւուտ բէյ) (1813-1878)

1832ին ուսանել է Պիզայի Բժշկական Համալսարանում, ապա վիրաբուժութիւն ուսումնասիրել Փարիզի Բժշկական Համալսարանում։ 1840ին վերադարձել է Կ.Պոլիս եւ դասախօսական պաշտօնի անցել ԿՊԲՎում։ 1856ին ընտրուել է ԿԲԸի անդամ[73]։ Խմբագրել է Ֆրանսերէն Gazette Medicale d'Orient բժշկական պարբերաթերթը։ 1861ին նշանակուել է Լեռնալիբանանի ընդհանուր կառավարիչ Արթին փաշա Տաւուտեանի բժշկական տեսուչ եւ խորհրդական։ 1865ին վերադառնալով Կ.Պոլիս՝ կարգուել է Ս. Յակոբ հիւանդանոց-անկելանոցի բժշկապետ։ Ունեցել է միրալայի զինուորական աստիճան եւ բէյի տիտղոս[74]։

Գասպար բէյ Սինապեան (1814-1872)

Գասպար բէյ Սինապեանը արքունի դեղապետ Գէորգ Սինապեանի որդին է։ Մասնագիտական կրթութիւն է ստացել Պիզայի եւ Փարիզի Բժշկական Համալսարաններում։ 1845ին Կ.Պոլիս վերադառնալուց անմիջապէս յետոյ սկսել է դասաւանդել Կ.Պոլսի ԿՊԲՎում։ ԿԲԸի հիմնադիրներից է, որի նախագահն է եղել 1863ին[75]։ Որպէս Առողջապահական Բարձրագոյն Խորհրդի անդամ՝ մեծ մասնակցութիւն է ունեցել 1865ի հնդախտի համաճարակի վերացման գործին։ Հակառակ իր կամքին եւ կոչմանը՝ նշանակուել է Պետական Բարձրագոյն Խորհրդի Վճռաբեկ Ատեանի անդամ։ Եղել է վարչապետ Ալի փաշայի անձնական բժիշկը եւ ծառայել Վալիդէ Սուլթանուհու (մայր սուլթանուհի) մօտ։ Ունեցել է գնդապետի զինուորական աստիճան։ Սինապեանը նշանաւոր է եղել հայ կաթոլիկ հասարակութեանը մատուցած ծառայութիւններով։ Հեղինակ է բժշկութեանը նուիրուած ուսումնասիրութիւնների[76]։

Մկրտիչ բէյ Բառլատեան (1822-1873)

Գերազանց արդիւնքներով աւարտել է Կ.Պոլսի ԿՊԲՎն։ Կ.Պոլսի եւ կայսրութեան տարբեր վայրերի զինուորական հիւանդանոցներում ու զօրամասերում ծառայել է որպէս զինուորական բժիշկ։ 1863ին ստացել է միրալայի աստիճան եւ ուղարկուել Բաղդադ՝ որպէս տեղի կայսերա-

կան բանակի եւ զինուորական հիւանդանոցի բժշկապետ եւ շուրջ 10 տարի մնացել այդ ծառայութեան մէջ[77]։

Ֆերուխան Բարունակ բէյ Քրթիկեան (Քռթիկեան, 1824-1869)

1847ին Կ.Պոլսի ԿԶԲՎն աւարտելուց անմիջապէս յետոյ ծառայութեան մէջ է մտնում Հայդարփաշայի եւ Մանասթիրի զինուորական հիւանդանոցներում։ 1853-1859 Մանասթիրի Զինուորական Հիւանդանոցում վարում է բժշկապետի պաշտօնը։ Իր մասնագիտական հմտութեան շնորհիւ մեծ համբաւ եւ հեղինակութիւն է ձեռք բերել։ 1855ին Օսմանեան կառավարութիւնը Ֆերուխանի անձնուէր ծառայութիւնները գնահատելով՝ նրան շնորհել է միրալայի աստիճան եւ այնուհետեւ տեղափոխել Շումնայում տեղակայուած կայսերական զօրաբանակ եւ նշանակել նրան բժշկապետի պաշտօնում։ Անդամակցել է ԿԲԸին եւ Արքունի Բժշկական Ժողովին։ 1865ի հնդախտի համաճարակի վերացման համար ստեղծուած յանձնաժողովի աշխատանքներին իր գործուն մասնակցութեան եւ անբասիր ծառայութիւնների համար գնահատուել է սուլթանի կողմից՝ արժանանալով Մեջիդիէի Գ. կարգի պատուանշանի[78]։

Բարունակ բէյ Քրթիկեանը հաւասար եռանդով կատարել է ազգային եւ պետական պարտականութիւնները։ 1867ին եղել է Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցի լիազօր վերատեսուչը եւ մասնակցել այնտեղ տեղ գտած թերութիւնների վերացման աշխատանքներին։ Մասնակցել է նաեւ Սահմանադրական Յանձնաժողովի աշխատանքներին։ Անդամակցել է Ուսումնական Խորհրդին եւ վարել Քաղաքական Ժողովի ատենապետի պաշտօնը։ Որպէս հրապարակագիր՝ Բարունակ բէյ Քրթիկեանը հանդէս է եկել Մասիս եւ Հայաստան պարբերականներում։ Հեղինակ է Ճանապարհորդութիւն Ի Բարելոն ընդ Հայաստան ուղեգրական գործի[79]։

Յակոբ բէյ Յովհաննէսեան (1826-1859)

Նա Կ.Պոլսոյ ԿԶԲՎի առաջին շրջաւարտներից է։ Սուլթանական բարձր հրամանով կարգուել է ԿԶԲՎի դասախօս։ Վարել է նաեւ Շումնայում տեղակայուած կայսերական բանակի բժշկապետի պաշտօնը։ Հասել է միրալայի աստիճանի եւ ստացել բէյի տիտղոս։ Պաշտօնավարել է նաեւ Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցում՝ որպէս բժշկապետ[80]։

Յովհաննէս բէյ Շիմշիրեան (՞-1895)

Կ.Պոլսոյ ԿԶԲՎի շրջանաւարտներից է։ Որպէս զինուորական բժիշկ ծառայել է Զաթալճայում տեղակայուած գնդում, Եմէնի ռազմաճակատային գծում։ Մասնակցել է 1877-1878ի ռուս-թուրքական պատերազ-

մին եւ վիրաւորուել։ Օսմանեան բանակին մատուցած ծառայութեան համար հասել է միրայի աստիճանի եւ արժանացել բէյի տիտղոսի[81]։

Յակոբ բէյ Խանտանեան (1834-1898)

Հարիւրապետի աստիճանով 1860ին աւարտում է ԿՋԲՎն։ Պաշտօնավարել է Կ.Պոլսի մի շարք զինուորական հիւանդանոցներում։ Զինուորական եւ քաղաքային վարժարաններում դասաւանդել է դատական բժշկութիւն։ Պատրաստել է դատական բժշկութեանը նուիրուած դասագրքեր, որոնցով երկար շրջան ուսանում էին բժշկական վարժարանների թուրք ուսանողները։ Եղել է Առողջապահական Բարձրագոյն Խորհրդի ընդհանուր քարտուղարը[82]։ Ըստ թուրք պատմաբան Ռըզա Թահսինի՝ Յակոբ բէյ Խանտանեանը կարող եւ բժշկութեան ասպարէզում կատարեալ հմտութիւն ցուցաբերած պատուական անձնաւորութիւն էր։ Ունէր միրայի զինուորական աստիճան եւ բէյի տիտղոս[83]։

Կոմիտաս բէյ Մինասեան (1837-1903)

Մասնագիտական կրթութիւնը ստացել է Կ.Պոլսի ԿՋԲՎում։ 1859ից որպէս զինուորական բժիշկ ծառայել է կայսրութեան տարբեր վայրերում տեղակայուած զօրամասերում։ Իր խղճամիտ եւ անբասիր ծառայութեան համար մեծ հեղինակութիւն եւ փառք է վայելել ու հասել գնդապետութեան աստիճանի։ Օրէնսգէտ բժշկի պաշտօնով 1871-1875 ծառայել է Օսմանեան կայսրութեան Ոստիկանութեան նախարարութիւնում։ Անյայտ պատճառներով հեռացել է պաշտօնից։ 1878ին հրաւիրուել է Ռազմական նախարարութիւն, ուր եւ պաշտօնավարել է մինչեւ իր մահը[84]։ Մամուլում հանդէս է եկել Ֆրանսերէն բանաստեղծութիւններով։

Յովհաննէս բէյ Թապիպեան (1845-1894)

Փայլուն արդիւնքներով աւարտել է ԿՋԲՎն եւ մրցոյթում յաղթելով՝ կառավարութեան կողմից ուղարկուել Վիեննա՝ մասնագիտական ուսման մէջ խորանալու։ Վերադարձին սկսել է դասախօսել ԿՋԲՎում։ Իր մասնագիտական հմտութիւնը նախանձ է յարուցել այդ ճիւղի մէկ այլ թուրք դասախօսի մօտ։ Դա պատճառ է հանդիսացել, որ նրան հեռացնեն վարժարանից եւ ուղարկեն զինուորական ծառայութեան Շքոտրա քաղաքը (Ալբանիա), ուր Թապիպեանը տաս տարի (1875-1885) ծառայել է որպէս տեղի հիւանդանոցի բժշկապետ։ ԿՋԲ Վարժարանը զգալով ախտային անդամագննութեան մասնագէտի խիստ պակասը՝ Յովհաննէս Թապիպեանին կրկին հրաւիրում է աշխատանքի։ Դասաւանդել է նաեւ Քաղաքային Բժշկական Վարժարանում[85]։ Ունեցել է մի-

բայի զինուորական աստիճան։ Փաշայութիւն ստանալու նախօրեակին յանկարծամահ է լինում[86]։

Տիգրան բէյ Աճէմեան (1852-1913)

1874ին հարիւրապետի աստիճանով աւարտել է Կ.Պոլսի ԿՋԲՎն եւ շատ չանցած կառավարութեան կողմից ուղարկուել Վիեննա՝ մասնագիտական կրթութեան մէջ խորանալու։ 1877ին վերադառնում է Կ.Պոլիս եւ պաշտօնավարում տարբեր հիւանդանոցներում։ Այնուհետեւ դասախօսական պաշտօնի անցնում ԿՋԲՎում։ Վարել է ԿԲԼի փոխատենապետի պաշտօնը։ Իր ժամանակի ամենաճարտար եւ համբաւաւոր ակնաբոյժն էր։ Շուրջ 30 տարի դասախօսել է ԿՋԲՎում՝ թուրքական բժշկութեան համար պատրաստելով բազմաթիւ մասնագէտներ։ Այս բազմամեայ մանկավարժական գործունէութիւնն ըստ արժանւոյն չի գնահատուել։ Փաշայի տիտղոսին արժանանալու փոխարէն՝ նրան զրկել են իր պաշտօնից, որից վշտահար Աճէմեանը վախճանուել է միրայի աստիճանում։ Թողել է ակնաբուժութեանը նուիրուած հրատարակութիւններ։ Վարել է Ազգային Երեսփոխանական Ժողովի եւ Ուսումնական Խորհրդի ատենապետի պաշտօնները[87]։

Յակոբ բէյ Տատրեան (1853-1936)

1880ին աւարտել է ԿՋԲՎն։ Տաս տարի զինուորական ծառայութեան մէջ է գտնուել Բաղդադի, Մուսուլի, Բասրայի զինուորական հիւանդանոցներում[88]։ Պաշտօնավարել է նաեւ Թրակիայի՝ Քըրքլարելիի եւ Զորլուի զինուորական հիւանդանոցներում։ Եղել է Մարմարա-էրէյլիի զինուորական հիւանդանոցի բժշկապետը։ Մասնակցել է Բալկանեան պատերազմին։ Ա. Աշխարհամարտի առաջին երկու տարիներին վարել է Սելիմիէ հիւանդանոց-զօրանոցի բժշկապետի պաշտօնը։ Ունէր միրայի կոչում։ Փորձառու եւ հեղինակաւոր բժիշկի համբաւ է ունեցել։ Արքունիքի եւ ընդհանուր սպայակոյտի կողմից պատուրուած է շքանշաններով[89]։

Սարգիս բէյ Պէրպէրեան (1857-1945)

Աւարտել է ԿՋԲՎն։ Եղել է Թոփգափուի Զինուորական Հիւանդանոցի բժշկապետը։ Բալկանեան պատերազմի եւ Ա. Աշխարհամարտի ժամանակ որպէս զինուորական բժիշկ ծառայել է ճակատային տարբեր զինուորական հիւանդանոցներում։ Երկար ժամանակ ծառայել է Միրիայի, մասնաւորապէս Եմէնի ռազմաճակատային գծում[90]։

Արթին բէյ Տելլէթեան (1852-1937)

1884ին աւարտել է Կ.Պոլսի ԿՋԲՎն։ Մեծ ծառայութիւններ է մատուցել թուրքական բանակին։ 23 տարի եղել է Էդիրնէի զինուորական

հիւանդանոցի բժշկապետը, իսկ 1910ից վիրաբուժապետը՝ Հայդարփաշայի զինուորական հիւանդանոցի։ Բալկանեան պատերազմի ժամանակ ծառայել է Բ. զօրաբանակում որպէս բժշկապետ, իսկ Ա. Աշխարհամարտի տարիներին եղել է Գատըգիւղի զինուորական հիւանդանոցի բժշկապետը։ Ունեցել է գնդապետի աստիճան։ Իրեն առաջարկուել է էդիրնէ նահանգի շիւայի փաշայութիւնը (զօրապետութիւնը), սակայն տարիքի պատճառով հրաժարուել է։[91]

Գրիգոր բէյ Թագուորեան (?- 1884)

Մասնագիտական կրթութիւն ստացել է Կ.Պոլսի ԿՋԲՎում եւ Փարիզի Բժշկական Համալսարանում։ Ծառայել է երկրի տարբեր վայրերում տեղակայուած օսմանեան բանակի զօրամիաւորումներում եւ զինուորական հիւանդանոցներում։ Հասել է միրալայի աստիճանի եւ արժանացել բէյի տիտղոսի[92]։

Արթին բէյ Հալվաճեան (1865-1915)

Սովորել է ԿՋԲՎում։ Երկար տարիներ ծառայել է Թուրքական բանակում եւ զինուորական հիւանդանոցներում։ Իր խղճամիտ ծառայութեան համար գնահատուել է Ռազմական նախարարութեան կողմից եւ արժանացել միրալայի կոչմանն ու բէյի տիտղոսին։ Ա. Աշխարհամարտի ժամանակ որպէս Ե. զօրագնդի բժշկապետ՝ ուղարկուում է Կովկասեան ռազմաճակատ։ Այս ճակատում թուրքական բանակի կրած պարտութիւնից յետոյ, կասկածելի համարելով ռուսական սահմանագլխում հայ զինուորական բժիշկների ներկայութիւնը՝ ուղարկուել է Խարբերդ-Մեզիրէ, ուր պարտաճանաչ եւ իր գործին գիտակից հմուտ բժիշկը մեծապէս օգտակար է եղել Թուրքական բանակին, մասնաւորապէս բծաւոր տենդի համաճարակի օրերին՝ հազարաւոր թուրք զինուորների կեանքեր փրկելով։ Արժանացել է տեղի զինուորական իշխանութիւնների գնահատանքին։ Սակայն Արթին բէյ Հալվաճեանը կիսելով իր հայրենակիցների ճակատագիրը՝ նահատակուել է 1915ին[93]։

Յակոբ բէյ Պէկեան (?-1928)

1869ին աւարտել է ԿՋԲՎն։ Աւելի քան կէս դար եղել է զինուորական ծառայութեան մէջ։ Հասել է միրալայի զինուորական աստիճանի։ 1891-1894 անդամակցել է Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութեանը։ Անդամակցել է նաեւ Բերայի Թաղական Խորհրդին[94]։

Մինաս բէյ Աւետիսեան (1849-?)

Ուսանել է Իտատիէ Զինուորական Վարժարանի Անասնաբուժութեան Բաժնում։ Երեսուն տարի շարունակ դասաւանդել է Զինուորական Անասնաբուժական Վարժարանում։ Երկրին եւ օսմանեան բանա-

կին մատուցած ծառայութիւնների համար հասել է միրալայի աստիճանի։ 1903ին Համիդ Բ-ի դէմ անյաջող մահափորձի օրը Մինաս բէյը ի պաշտօնէ ընկերակցում էր հեծեալ գնդին։ Իր հայ լինելու պարագան պատճառ է դառնում նրա ձերբակալութեան եւ աքսորին։ 1910ին Դամասկոսից վերադառնում է եւ ստանձնում իր նախկին պաշտօնները։ Անասնաբուժական Վարժարանի ուսանողների համար պատրաստել է անասնաբուժութեանը նուիրուած ձեռնարկներ, որոնցով երկար շրջան ուսանել են թուրք ուսանողները[95]։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

ԺԹ. դարի կէսերից հայերի առջեւ պետական գործունէութեան լայն ասպարէզ բացուեց, երբ կայսրութիւնը փորձեց սերտացնել իր յարաբերութիւնները Եւրոպայի հետ եւ Բարձրագոյն Դուռը, հետեւելով եւրոպական երկրներին, սկսեց արդիականացնել իր վարչական համակարգը։ Ի թիւս միւս գերատեսչութիւնների՝ հայերը պատասխանատու պաշտօններ գրաւեցին նաեւ Նաւատորմի եւ Ռազմական նախարարութիւններում։ Նրանցից ոմանք իրենց գործունէութեան ընթացքում արժանացել են զինուորական բարձր կոչումների։

Յովսէփ Վարդանեան (Վարդան փաշա) (1815-1879)

Երիտասարդ տարիքում պետական ծառայութեան մէջ է մտնում օսմանեան Նաւատորմի նախարարութիւնում։ Ստացել է միրմիրանի զինուորական աստիճան եւ փաշայի տիտղոս։ Ղրիմի պատերազմի (1853-1856) ժամանակ վարել է օսմանեան նաւատորմի Ա. թարգմանի պաշտօնը։ 25 տարի զինուորական ծառայութեան մէջ մնալուց յետոյ անցել է քաղաքացիական պաշտօնների[96]։ Օսմանեան տարբեր նախարարութիւններում վարել է պատասխանատու պաշտօններ եւ իր օգտաշատ գործունէութեան համար արժանացել բէյի տիտղոսի։ Նրա կուրծքը զարդարում էին Օսմանիէի եւ Մեջիդիէի տարբեր կարգի եւ Եւրոպական մեծ տէրութիւնների կառավարութիւնների կողմից շնորհուած շքանշանները[97]։

Յովսէփ Վարդանեանը ժամանակի ամենազարգացած, լեզուների գիտակ, եւրոպական գրականութեանն ու մշակոյթին քաջատեղեակ այն անձնաւորութիւնն էր, որ աւելի քան 25 տարի փայլել է հայ հանրային կեանքում որպէս հրապարակախօս եւ խմբագիր։ Հիմնականում հայատառ թուքերէն լեզուով հրատարակել է գեղարուեստական եւ պատմագիտական արժէքաւոր երկեր[98]։

Անտոն Եաւէր փաշա Թրնկրրեան (1812-1908)

Ինքնակրթութեամբ տիրապետել է Ֆրանսերէն, իտալերէն, յունարէն, թուրքերէն լեզուներին։ 24 տարեկանում մտել է պետական ծառայութեան մէջ՝ աշխատելով Բարձրագոյն Դրան Թարգմանչաց Դիւանում, այնուհետեւ՝ Շոգենաւերի Վարչութիւնում։ Ղրիմի պատերազմի ժամանակ օսմանեան ընդհանուր զօրքերի հրամանատար Իսմէր փաշայի քարտուղարն էր։ 1855ին ստանում է ռազմա-ծովային նաւատորմի միրալայի աստիճան։ 1855-1856 Թրնկրրեանին է յանձնւում Շոգենաւերի Ընդհանուր Վարչութիւնը եւ Արքունի Նաւարանի Վերատեսչութիւնը։ 1862ին արժանանում է միրլիւայի գինուորական կոչմանը։ 1864ին ընտանձնում է Ռազմական նախարարութեան Օտար Լեզուների Թղթակցութեան Դիւանի Տնօրէնի պաշտօնը։ 1870-1871 անդամակցում է Պետական Խորհրդին։ 1875-1876 հասել է Ռումելիի պէյլէրպէյի աստիճանի։ Վարել է նաեւ օսմանեան Նամակատարութեան եւ Հեռագրական Նախարարի պաշտօնը եւ կարեւոր բարեկարգութիւններ մտցրել այս ապարէզում։ 1881ին դարձել է քննիչ Հանրային Պարտուց Վարչութեան, իսկ 1903ին՝ Երեւմտեան Բարձրագոյն Խորհրդի անդամ[99]։ Անտոն փաշա Թրնկրրեանը 58 տարի ծառայել է Օսմանեան տէրութեանը։ Օսմանեան կայսրութեան եւ օտար երկրների կառավարութիւնների կողմից արժանացել է Մեջիդիէի եւ Օսմանիէի տարբեր կարգի, Պատուոյ Լեգէոնի, Ս. Մաւրիկիոսի, Ս. Ղազարի եւ այլ շքանշանների[100]։

Թորոս բէյ Գիսակը նոյնպէս օսմանեան նաւատորմի պաշտօնեայ էր եւ ունէր միրալայի աստիճան[101]։

Լեռնալիբանանի հայազգի կառավարիչներ Կարապետ Արթին փաշա Տաւուտեանը, Յովհաննէս փաշա Գուլումճեանը ունեցել են միւշիրի (մարաջախտ) կոչում։ Մինչ Լեռնալիբանանի կառավարչի պաշտօնի ստանձնումը, նրանք վարել են դիւանագիտական պաշտօններ եւ չեն ունեցել գինուորական կոչումներ։ Թերեւս կարեւոր պայման էր, որ Լեռնալիբանանի կառավարիչներն ունենան գինուորական աստիճան, մանաւանդ, որ այս տարածաշրջանը գտնուել է համայնքային գինուած բախումների մէջ։

Կարապետ փաշա Տաւուտեան (1816-1873)

Երկար ժամանակ դեսպանական պաշտօններ է վարել Եւրոպայի երկրներում եւ դիւանագիտական շրջանակներում մեծ հեղինակութիւն վայելել։ Եւրոպայի հինգ մեծ տէրութիւնների եւ կայսրութեան կողմից կազմուած յանձնաժողովը 1861ին Տաւուտեանին նշանակում է ինքնավար Լեռնալիբանանի ընդհանուր կառավարիչ։ Նրան շնորհւում է միւ-

շիրի կոչում եւ փաշայի տիտղոս։ Կայսրութեան մէջ նա առաջին քրիստոնեան էր, որը արժանացել է մարաջախտի բարձր կոչմանը։

Իր պաշտօնավարութեան շրջանում Տաւուտեանը վարել է Լեռնալիբանանի ինքնուրոյնութիւնը պահպանելու, կրօնական հակամարտութիւնները մեղմացնելու, առեւտրական, տնտեսական եւ կրթա-մշակութային վերելքը խթանելու քաղաքականութիւն։ Յետագայում նրան վստահւում է կայսրութեան Հասարակական Կառոյցների Նախարարի պաշտօնը։ Ի թիւս միւս օգտաշատ ձեռնարկների՝ նա կարողացել է կազմակերպել Ասիան եւ Մերձաւոր Արեւելքը Եւրոպային կապող Ռումելիի երկաթուղու շինարարութիւնը, որը կայսրութեան տնտեսական եւ քաղաքական կեանքում բացառիկ նշանակութիւն է ունեցել[102]։

Տաւուտեանը բազմակողմանի զարգացման տէր անձնաւորութիւն էր։ Հին գերման ցեղերի օրէնքներին նուիրուած իր գիտական ծաւալուն ուսումնասիրութեան համար Գերմանիայի կանցլերի կողմից նա ստացել է յատուկ մրցանակ եւ ընտրուել Բեռլինի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ[103]։

Որպէս պետական բարձր պաշտօնեայ եւ արժէքաւոր քաղաքագէտ նա արժանացել է շքանշանների. 1867ին Նապոլէոն Գ.ն նրան շնորհել է Պատուոյ Լեգէոնի պատուանշանը։ Օսմանեան կառավարութիւնից ստացել է տարբեր կարգի շքանշաններ, Օսմանիէի մեծ ժապաւէնը, իսկ Հռոմի Պապը նրան շնորհել է Մեծն Գրիգորի Ասպետութեան առաջին կարգի շքանշանը[104]։

Յովհաննէս փաշա Գուլումճեան (1858-1933)

Սովորել է Կ.Պոլսի Վիեննական Մխիթարեանների Վարժարանում եւ Փարիզի Յիսուսեանների հռչակաւոր Vaugirard կրթական հաստատութիւնում։ Կ.Պոլիս վերադառնալով՝ մտել է պետական ծառայութեան։ Պատասխանատու պաշտօններ է վարել է Արտաքին Գործոց Նախարարութիւնում։ 1899-1908 եղել է Հռոմում օսմանեան դեսպանատան Ա. քարտուղարը, այնուհետեւ՝ Իտալիայում օսմանեան գործերի հաւատարմատարը։ 1908ին վերադարձել է Կ.Պոլիս եւ ընտրուել Պետական Խորհրդի անդամ եւ նոյն թուականից վարել Արտաքին Գործոց փոխնախարարի պաշտօնը։ 1912ին Գաբրիէլ Նորատունկեանը նշանակւում է կայսրութեան Արտաքին Գործոց Նախարար։ Տեսնելով, որ Արտաքին Գործոց Նախարարութիւնում հայերի բարձր դիրքը կարող է թուրքերի նախանձը գրգռել՝ այս երկու բարեկամները ցուցաբերում են փոխըմբռնում. Գուլումճեանը հրաժարւում է Արտաքին Գործոց նախարարութիւնում զբաղեցրած իր պաշտօնից եւ ընդունում Լեռնալիբանանի կա-

ռավարչի պաշտօնը, որը ժամանակ առաջ մերժել էր։ Նրա թեկնածութիւնը միաձայն ընդունուել է Եւրոպական մեծ տէրութիւնների կողմից[105]։ Գուլումճեանին շնորհւում է *միւշիրի* կոչում եւ փաշայի տիտղոս։ Այս պաշտօնը նա ստանձնել է քաղաքական խառնակ վիճակում։ Երեք տարուայ պաշտօնավարութեան շրջանում իրականացրել է հինգ կարեւոր բարեկարգութիւններ՝ այսպիսով օգտակար լինելով Լեռնալիբանանի ժողովրդին։ 1915ին Բարձրագոյն Դուռը չեղեալ է յայտարարում Լեռնալիբանանի առանձնաշնորհեալ կարգավիճակը եւ Գուլումճեանը վերադառնում է Կ.Պոլիս, ընտրւում օսմանեան Մերակոյտի անդամ, սակայն հրաժարուել է այս պաշտօնից՝ չցանկանալով առնչութիւն ունենալ այդ արիւնոտ կառավարութեան հետ, եւ մեկնել Հռոմ[106]։

Օսմանեան բանակում ծառայած հայերից *միւշիրի* զինուորական կոչում է ունեցել նաեւ օսմանեան ողջ բանակի գլխաւոր դեղագործ Ֆերդի փաշա Թերճիմանեանը[107]։

ՀԱՅԵՐԻ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Հայ-թուրք համակեցութեան պատմութեան ընթացքում եղել են բացառիկ, եզակի դէպքեր, երբ օսմանեան իշխանութիւնները դիմել են հայերի ռազմական օգնութեանը։ Ջալալիների ապստամբութեան ժամանակ, երբ Դելի Հասանը 1600ին յարձակուել էր Սեբաստիայի վրայ, տեղի կառավարիչ փաշան, չունենալով բաւական չափով կանոնաւոր զօրք, զինում է քաղաքի բնակիչներին, այդ թւում նաեւ հայերին։ Քաղաքացիք կռւում են, սակայն պարտուելով՝ ենթարկւում են ջալալիների վրէժխնդրութեանը[108]։

1787ին, երբ պատերազմ ծագեց Օսմանեան կայսրութեան եւ Աւստրիայի ու նրա զինակից Ռուսաստանի միջեւ՝ օսմանեան բանակը զօրացնելու նպատակով մեծ եպարքոս Եուսուֆ փաշան աննախընթաց որոշում է կայացնում քրիստոնեաներին զինուորագրել։ Օրուայ պատրիարք Զաքարիա Կաղզուանցին ստիպուած էր համաձայնուել եւ չորս տարի տեւած պատերազմի ընթացքում իւրաքանչիւր տարի բանակին տրամադրել պահանջուած լաւ պատերազմող 1000ական զինուոր[109]։

1839ի Նոյեմբերի 9ին սուլթան Աբդուլ Մեջիդը (1839-1861) Գիւլհանէի արքայական պալատում հռչակեց օսմանեան բարենորոգումների առաջին հրովարտակը՝ *Գիւլհանէի Հաթթ-ը Շերիֆը* (Վարդաստանի հրովարտակը), որը ծանօթ է *Թանզիմաթ* անունով։ Այն կայսրութեան բոլոր հպատակներին, առանց կրօնի եւ ցեղի խտրականութեան, խոստանում էր հաւասարութիւն, կեանքի եւ գոյքի ապահովութիւն, տուր-

քերի եւ հարկերի արդար բաշխում եւ կանոնաւոր գինուորագրութիւն[110]։ Դա նշանակում էր, որ քրիստոնեաները կարող էին անարգել մուտք գործել օսմանեան բանակի շարքերը։ Սակայն Բարձրագոյն Դուռը հրաժարուեց քրիստոնեաների գինուորագրութեան գաղափարից եւ շարունակեց գանձել գինուորական տուրքը նախ՝ *իյանէ-ի ասքերիէ* (օժանդակութիւն բանակին) եւ ապա՝ *բեդէլ-ի ասքերիէ* (գինուորագրութեան փոխարէն) անուններով[111]։

1847ին հայերը գինուորական ծառայութեան կանչուեցին կառավարութեան կողմից, երբ օսմանեան բանակը երկրի արեւելեան նահանգներում պայքարում էր քուրդ ինքնիշխան ցեղապետերի դէմ[112]։ Հայերի մասնակցութիւնը քրդերի դէմ մղուած կռիւներում բխում էր դարերով կուտակուած գայրոյթից, քանզի հայ գիւղացիների կեանքի, ունեցուածքի եւ պատուի ապահովութիւնը կախուած էր քուրդ ցեղապետերի քմահաճոյքից[113]։

1864ին բացուեց *Հարբրիէի* Զինուորական Վարժարանը, որը նախատեսուած էր նաեւ ոչ-մահմեդականների համար։ Սուլթան Աբդուլ Ազիզի (1861-1876) հրամանով հինգ հայ երիտասարդներ ընդունուեցին վարժարան։ Սակայն նրանց թոյլ չտրուեց հարիւրապետի աստիճանից բարձրանալ։ Մինչեւ 1908 Հարբրիէի զինուորական այս վարժարանի դռները փակ մնացին հայերի համար[114]։

1877ի ռուս-թուրքական պատերազմում մեծ կորուստներ կրելով՝ Օսմանեան կառավարութիւնը հարկաւոր համարեց զօրք հաւաքագրել նաեւ իր հպատակ քրիստոնեայ ազգերից եւ դիմեց նրանց ներկայացուցիչ պատրիարքներին[115]։ Կ.Պոլսի Ազգային Երեսփոխանական Ժողովի 1877ի Դեկտեմբերի 14ի նիստի մասնակիցների ստուար մեծամասնութիւնը մերժեց գոհացում տալ կառավարութեան պահանջին, թէեւ եղան նաեւ այդ որոշման ընդդիմադիրներ։ Կառավարութեան գինուորագրութեան առաջարկի հանդէպ Կ.Պոլսի Ազգային Երեսփոխանական Ժողովի այս յանդուգն դիրքը գայրոյթ յառաջացրեց օսմանեան կառավարող շրջանակներում։ Ազգային Ժողովի պատմական այս նիստում արտայայտուած տրամադրութիւնները խանդավառութեան ալիք ստեղծեցին բակում հաւաքուած ժողովրդի մօտ[116]։

1878ից հինգ տարի առաջ Ազգային Երեսփոխանական Ժողովում գաւառներում հարստահարութիւնների հարցը քննարկելիս՝ կազմուած յանձնաժողովի անդամների մեծամասնութիւնը գտաւ, որ *բեդէլ-ի ասքերիէ* հարկի պատճառով ժողովուրդը շատ է հարստահարւում ուստի դրա փոխարէն արժէ որ գինուոր տրուի օսմանեան բանակին։ Այդ օրե-

րի պատրիարք Մկրտիչ Խրիմեանը մերժեց այդ գաղափարը՝ հարցը թողնելով ապագային, երբ ապահովուի քրիստոնեաների եւ մահմեդականների հաւասարութիւնը բանակում[117]:

Օսմանեան իշխանութիւնները քաջ գիտակցում էին, որ բանակում չէր կարող լինել հաւասարութիւն: Դեռ սուլթան Մահմուդ Բ.ն (1808-1839) երկրի մահմեդականների վրայ ծանրացած զինուորական ծառայութեան պարտականութեան բեռը թեթեւացնելու նպատակով մտադրւում է կայսրութեան հպատակ բոլոր ազգերի համար պարտադիր զինուորագրութեան օրէնք սահմանել: Այդ, եւ մասնաւորապէս, հայերի զինուորագրութեան խնդրի շուրջ 1839ի Ապրիլի 5ին Մալաթիայից Գերմանիա՝ իր բարեկամին ուղղուած նամակում Մահմուդ Բ.ն յայտնում է այն տեսակէտը, որ Անատոլիայի հայերը կարգապահութեան սովոր, չափաւոր, ուժեղ եւ կորովի ազգ են եւ արաբներից ու մահմեդական քրդերից առաւել պիտանի են Օսմանեան պետութեանը, սակայն հայերը կը ճգմուեն մահմեդականներից կազմուած զօրամիաւորումներում, կը չքանայ նրանց եռանդը եւ յառաջխաղացման ամէն ցանկութիւն, ուստի արդիւնաւէտ կարող էր լինել զուտ հայերից կազմուած առանձին ջոկատների եւ վաշտերի ստեղծումը, սակայն մահմեդական մոլեռանդութիւնը խոչընդոտ կը լինի նման զօրամիաւորումների գոյութեանը[118]:

1908ի օսմանեան սահմանադրութեան վերահաստատումից յետոյ, հայերը եւ երկրի միւս քրիստոնեաները օսմանեան խորհրդարանում պահանջեցին զինուորագրուել եւ հաւասար իրաւունքներով ծառայել օսմանեան բանակում: Հայերի պահպանողական տարրը դէմ էր զինուորագրութեանը, իսկ երիտասարդութիւնը՝ կողմնակից: 1910ի օսմանեան խորհրդարանի ընդունած օրէնքից յետոյ երկրի բաղկացուցիչ բոլոր ազգերը ենթակայ էին զինուորական ծառայութեան: Զինուորագրութեան օրէնքի ընդունուելուց յետոյ վերացաւ *բեդէլ*-ի *ասքերիէն*: 1910ի Օգոստոսին եւ Սեպտեմբերին հրատարակուած զօրակոչի հրամանը խանդավառութեամբ ընդունեցին հայ երիտասարդները, որովհետեւ ստորացուցիչ հպատակ, *բայա*, *գերի* բառերի ծանր բեռը վերցուեց նրանց ուսերից[119]:

Զինուորական ասպարէզը բացուեց հայերի համար: Օգտուելով ընձեռուած հնարաւորութիւնից՝ հայ երիտասարդները սկսեցին ուսանել Հարբիէի Վարժարանում եւ շատ շուտով ցուցաբերեցին իրենց կարողութիւնները զինուորական ասպարէզում: Թուրք սպաները հայերի կարգապահութիւնը, հաւատարմութիւնը, մաքրասիրութիւնը գնահատելով՝ սկսեցին թուրք զինուորներին փոխարինել հայերով: Շատերը

շուտով զինուորական աստիճանի բարձրացում ունեցան։ Թէ՛ Բալկանեան պատերազմի եւ թէ՛ Ա. Աշխարհամարտի ժամանակ հայ զինուորականները կատարեցին բազում քաջագործութիւններ եւ թուրք բարձր զինուորականութեան կողմից գովեստի արժանացան՝ փաստելով, որ հայը ոչ միայն ճարտար առեւտրական եւ արհեստաւոր է, այլեւ քաջ զինուոր[120]։

Բալկանեան պատերազմի ժամանակ, Եանիայի համար մղուող մարտերում հայ զինուորները գլխաւորապէս թնդանօթաձիգներ էին։ Թուրք հրամանատարները գովեստով էին խօսում նրանց յաւ նշանառու լինելու եւ ցուցաբերած տոկունութեան ու քաջութեան մասին[121]։

1914ի Օգոստոսի 1ին սկսուեց Ա. Աշխարհամարտը։ Որպէս Գերմանիայի դաշնակից՝ Օսմանեան պետութիւնը Հոկտեմբերին յայտարարեց պատերազմին իր մասնակցութեան մասին։ Օսմանեան բանակ գօրակոչուեցին 18-45 տարեկան ռազմունակ շուրջ 100 հազար հայ տղամարդիկ[122]։ Նրանք միացան մինչ այդ օսմանեան բանակում ծառայութեան մէջ գտնուող հայ զինուորականութեանը։

Զնայած բանակում հայ զինուորների համար ստեղծուած ծանրագոյն պայմաններին՝ նրանք փութացել են կատարել իրենց զինուորական պարտականութիւնները եւ այնպէս անձնուիրաբար, որ Կովկասեան ռազմաճակատում թուրքական զօրքի յարձակման Կարին-Սարիղամիշ ուղղութեան ճակատում գերի ընկնելու վտանգից ազատել են Էնվէրին։ Դրանից յետոյ նա հայ զինուորներների մասին գովեստի եւ շնորհակալութեան խօսք է ուղարկել Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարք Զաւէն Տէր-Եղիայեանին[123]։

Միւս կողմից, սակայն, պատերազմի առաջին օրերից երկրում սկսուեց հայ զինուորների դասալքութեան մասին կեղծ քարոզչութիւնը։ Դա միայն պատրուակ էր հայ ժողովրդի բնաջնջման երիտթուրքական կառավարութեան կանխամտածուած ծրագիրն իրականացնելու համար[124]։

1915ի Փետրուարի 12ին սկսուեց օսմանեան բանակի հայ զինուորականութեան զինաթափումը, որից յետոյ նրանցից կազմուեցին ամբէջ թաբուրներները (բանուորական վաշտեր)։ Նոյն ժամանակ սկսուեցին հայ սպաների մեկուսացումն ու ձերբակալութիւնները[125]։ Դրան հետեւեց ռազմական նախարար Էնվէրի օսմանեան բանակում ծառայող հայ զինուորների ոչնչացման մասին հրամանը[126]։ Հայ զինուորականութիւնը թիկունքում խումբ-խումբ սպանուեց անօրինակ դաժանութեամբ։

Ա. Աշխարհամարտի առաջին օրերից զինուորական հիւանդանոցներում ծառայող հայ զինուորական բժիշկներից շատերը ընկան պատե-

բազմի դաշտում։ Ոմանք մահացան իրենց պարտականութիւնները կատարելու ժամանակ՝ բծաւոր տենդով վարակուած թուրք զինուորներին խնամելիս։ Իսկ շատ շատերը անգթօրէն խողխողուեցին պարզապէս հայ ծնուած լինելու համար։ 1915ի Ապրիլի 24ի գիշերը ձերբակալուեց նաեւ բանաստեղծ եւ արձակագիր Ռուբէն Սեւակը, որ Ա. Աշխարհամարտի առաջին ամիսներից որպէս զինուորական բժիշկ, հարիւրապետի աստիճանով ծառայում էր Մաքրիգիւղի զինուորական հիւանդանոցում։ Նրան վիճակուեց անցնել մահուան դատապարտուած հայ մտաւորականների ուղիով՝ աքսոր Անատոլիայի խորքերը, տառապագին սպասում եւ բարբարոս խոշտանգում[127]։

Բժիշկների հիմնական նպատակը, նրանց կոչումն է պահպանել մարդուն, սակայն հայերի բնաջնջման ծրագրի հեղինակների ու գլխաւոր կազմակերպիչների մէջ եղել են թուրք բժիշկներ (Նազիմ բէյ, Բեհաէտտին Շաքիր)։ Նրանցից շատերն անձամբ են կատարել ոճիրներ եւ հենց իրենց հայազգի պաշտօնակիցների նկատմամբ[128]։ Ու եթէ Ա. Աշխարհամարտի տարիներին հայ բժիշկների մէկ մասի կեանքը խնայուեց, ապա դրա գլխաւոր պատճառը ռազմաճակատում թուրք բժիշկների պակասն էր։

Այսպէս ոչնչացնելով արեւմտահայութեան մարտունակ ուժերը՝ Թուրքական կառավարութիւնը իրականացրեց հայերի զանգուածային տեղահանութեան եւ կոտորածի՝ Ցեղասպանութեան իր կանխամտածուած ծրագիրը։

Այս կերպ հատուցեցին թուրքերն օսմանեան բանակի զօրացմանը հայերի դարաւոր տքնութեան դիմաց։ Նրանք իրենց «երախտագիտութիւնը» շարունակեցին յայտնել՝ հայերին ջնջելով օսմանեան զինուած ուժերի պատմութեան էջերից եւ յայտարարելով, թէ միայն մահմեդականներն ու թուրքերն են արիւն թափել Օսմանեան պետութեան համար, իսկ քրիստոնեաները, նրանց հետ նաեւ հայերը, ազատուած լինելով զինուորական պարտականութիւնից, հարստացել են եւ բարգաւաճել։ Սակայն անժխտելի պատմական փաստերը խօսում են այն մասին, որ հայերն իբրեւ զինուոր, արհեստաւոր, մատակարար, բժիշկ ու պաշտօնեայ, դարեր շարունակ ծառայել եւ մշտապէս ներկայ են եղել օսմանեան բանակում եւ իրենց մեծ նպաստն են բերել նրա զօրացմանը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յակոբ Սիրունի, *Պոլիս եւ իր Դերը*, Ա. հատ., Պէյրութ, Տպ. Մեսրոպ, 1965, էջ 434։

[2] Մանուէլ Զուրալեան, «Դեւշիրմէ»ն (Մանկահաւաքը) Օսմանեան կայսրութեան մէջ բռնի Թուրքական եւ Հայկական Աղբիւրներով», Պատմաբանասիրական Հանդէս, 1959, թիւ 2-3 (5-6), էջ 247-256։

[3] Մանուէլ Զուրալեան, Զարայիների Շարժումը եւ Հայ Ժողովրդի Վիճակը Օսմանեան կայսրութեան մէջ (XVI-XVII Դարեր), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1966, էջ 99-100։

[4] Արտակ Շաքարեան, «Արեան Հարկը» Օսմանեան կայսրութիւնում Դեւշիրմէ, Երեւան, 2006, էջ 38։

[5] Նոյն, էջ 126-129։

[6] Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ Հայոց, Բ. հատ., Գահիրէ, Տպ. Փափազեան, 1937, էջ 1919-1921։

[7] Նուպար Տէր Միքայէլեան, Նշանաւոր Հայազգի Մարդիկ, Պէյրութ, Տպ. Հայ Տիպ Քոմփիւկրաֆ-Թէքնոփրէս, 1988, էջ 142։

[8] Գէորգ Բամպուքճեան, «Հայոց Տառայութիւնը Թուրք Պետութեան եւ Մշակոյթին», Շողակաթ, 1962, թիւ Բ., էջ 55։

[9] Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Մարաթիոյ Հայոց, Պէյրութ, Տպ. Սեւան, 1961, էջ 1264-1266։

[10] Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ, էջ 1532-1534։

[11] «Սինան Ճարտարապետին Հայութիւնն Ապացուցուած», Անահիտ, 1931, թիւ Գ.-Դ., էջ 165-166։

[12] Արմէն Զարեան, «Ճարտարապետ Սինան», Գարուն, Երեւան, 1991, թիւ Ա., էջ 92-94։

[13] Գ. Հնասէր, «Օսմանեան Բանակի Հայ Զինուորներ, Ա. Ցամաքային Բանակ», Հայաստանի Կոչնակ, 1926, թիւ 42, էջ 1448-1449։

[14] Արշակ Ալպօյաճեան, «Կիպրոս Կղզին (Իր Անցեալն ու Ներկան)», Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, 1927, էջ 219։

[15] Սարգիս Գ. Փաչաճեան, Ցուշամատեան Թոռոսթոյի Հայերուն 1606-1922, Երկրորդ եւ լրացեալ հրատարակութիւն, Պէյրութ, Տօնիկեան, 1971, էջ 45-47, նաեւ՝ Տէր Միքայէլեան, էջ 156, նաեւ՝ Ցարութիւն Մրմրեան, Մասնական Պատմութիւն Հայ Մեծատուններու 1400-1900, Բ. տպագրութիւն, յարդարեալ եւ կրկնապատկեալ, Կ.Պոլիս, Օ. Արզուման, 1909, էջ 72-73։

[16] Գ. Հնասէր, «Օսմանեան Բանակի Հայ Զինուորներ, Բ. Մովալին Բանակ», Հայաստանի Կոչնակ, 1926, թիւ 43, էջ 1480-1481։

[17] Փաչաճեան, էջ 45-47։

[18] Տէր Միքայէլեան,էջ 156։

[19] Մրմրեան, էջ 72-73։

[20] Գ. Հնասէր, «Օսմանեան Բանակի», Հայաստանի Կոչնակ, 1926, թիւ 43, էջ 1449։

[21] Խաժակ, Հարկերը Տաճկաստանում, Բաքու, 1904, էջ 24։

[22] Հայ Ժողովրդի Պատմութիւն, Դ. հատ., Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1972, էջ 113։

[23] Լեւոն Վարդան, Հարկերը Օսմանեան եւ Պարսկական Կայսրութիւններում մէջ ԺԵ.-Ի. Դար, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, 2004, էջ 471-483։

[24] Գ. Հնասէր, «Կորսուելու Ենթակայ Վաւերաթուղթեր», Բազմավէպ, 1934, թիւ Ա., էջ 34-35։

[25] Ալբերտ Խաչատեան, Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօջախը (ԺԵ.-ԺԷ.դդ), Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2007, էջ 298։

[26] Հնասէր, «Կորսուելու», էջ 34։

[27] Լեւոն Վարդան, Հարկերը, էջ 478։
[28] Հայ Ժողովրդի Պատմութիւն, էջ 115։
[29] Խառատեան, էջ 265-266։
[30] Ալպոյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ, էջ 1028-1029։
[31] Հայ Ժողովրդի Պատմութիւն, էջ 307։
[32] Նոյն, էջ 287։
[33] Թորոս Ազատեան, «Հայ Պաշտօնատարներ Թուրքիոյ մէջ, Առաքել Տատ Ամիրա», Մարմարա, 1944, թիւ 353։
[34] Թորոս Ազատեան, Տատեան Գերդաստանը եւ իր Ականաւոր Դէմքերը, Իստանպուլ, «Աստղաբերդ» ամսագրէն արտատպուած, «Մշակոյթ» մատենաշար, թիւ 18, Տպարան «Վարօր», 1952։
[35] Արծուի Բախչինեան, Հայազգի Գործիչներ Հնագոյն Ժամանակներից մինչեւ մեր Օրերը, Երեւան, Զանգակ-97, 2002, էջ 145։
[36] «Ազգագրութիւն Տէմիրճիպաշեանց», Հանդէս Ամսօրեայ, 1900, թիւ Ա., էջ 51-54։
[37] Մրմրեան, էջ 146։
[38] Յովհաննէս Տէր Պետրոսեան, Հայերու Սատարը Թուրք Մշակոյթին եւ Տնտեսութեան, Գահիրէ, 1976, էջ 52։
[39] Դմիտրի Երեմէեւ, Թուրքերի Մագումը, Երեւան, «Հայաստան», 1975, էջ 235։
[40] Լեւոն Զորմիսեան, Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան, Ա. հատ., Պէյրութ, Կ. Տօնիկեան Հրատարակչատուն, 1972, էջ 150։
[41] Առաքել Քէչեան, Ակն եւ Ակնցին, Ա. հատ., Պուքրէշ, 1942, էջ 272։
[42] Ալպոյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ, էջ 1929։
[43] Վահան Զարդարեան, Ցիշատակարան Տարեգիրք 1942 Տարւոյ, Գահիրէ, Նոր շարք, Բ. տարի, 1941, էջ 6։
[44] Յակոբ Սիրունի, «Էջեր Մանուկ Բէյի Կեանքէն», Բանբեր Հայաստանի Արխիւների, 1969, թիւ Գ., 1970, թիւ Բ.-Գ.։
[45] Յակոբ Սիրունի, Պոլիս եւ իր Դերը, Բ. հատ., Պէյրութ, Տպ. Մեսրոպ, 1969, էջ 56-59։
[46] Վահէ Հայկ, Խարբերդ եւ Անոր Ոսկեղէն Դաշտը. Յուշամատեան Պատմական, Մշակութային եւ Ազգագրական, Նիւ Եորք, 1959, էջ 885-886։
[47] Առաքել Պատրիկ, Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ Գաւառի Հայութեան, Բ. հատ., Նիւ Եորք, 1983, էջ 289։
[48] Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, «Նոր Աստղ», 1952, էջ 1667։
[49] կենսագրութիւն, «Գրիգոր էֆ. Շապանեան», Հանդէս Ամսօրեայ, 1890, թիւ ԺԲ., էջ 255-257։
[50] Վահէ Հայկ, էջ 658։
[51] «Նշանաւոր Վախճանեալներ», Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկիչեան Հիւանդանոցի Հայոց, 1908, էջ 438-439։
[52] Վահրամ Թորգոմեան, «Կենսագրական Մանուէլ Բժիշկ Շաշեան», Հանդէս Ամսօրեայ, 1894, թիւ Դ, էջ 118։
[53] Արշակ Ալպոյաճեան, «Ազգային Սահմանադրութիւնը իր Մագումը եւ Կիրառութիւնը», Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց, 1910, էջ 177։
[54] «Օսմանեան Տէրութեան Հայ Աստիճանաւորները», Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկիչեան, 1908, էջ 147-149։

[55] Յակոբ Սիրունի, Պոլիս եւ իր Դերը, Դ. հատ., Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1988, էջ 294.

[56] Ա. Ն. Մեզպուրեան, Հայ եւ Մագուտով Հայ Բժիշկներ (1688-1940), Ա. հատ., Իսթանպուլ, 1950, էջ 164-167.

[57] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Տօքտ. Անդրանիկ Բաշա Կրճիկեան», Դարման, 1920, թիւ Ը.-Թ., էջ 128-129.

[58] Վահրամ Թորգոմեան, «Հարիւրամեակ Մնդեան Տօքտ. Ստեփան Բաշայի Ասլանեան», Հայաստանի Կոչնակ, 1931, թիւ 33, էջ 1637.

[59] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Ստեփան Փաշա Ասլանեան», Դարման, 1920, թիւ Ե., էջ 77-78.

[60] Վահրամ Թորգոմեան, «Ստեփան Փաշա Ասլանեան», Հանդէս Ամսօրեայ, 1905, թիւ Գ., էջ 75-79, թիւ Դ., էջ 111-113, թիւ Ե., էջ 142-149, թիւ Զ., էջ 177-186, 1908, թիւ Գ., էջ 67-70.

[61] Վահրամ Թորգոմեան, «Բժիշկ Տոքթ. Գաբրիէլ Փաշա Սեւեան», Հանդէս Ամսօրեայ, 1899, թիւ Զ, էջ 167-173.

[62] Սիրունի, Պոլիս, Դ. հատ., էջ 256.

[63] Մեզպուրեան, Հայ եւ Մագուտով Հայ Բժիշկներ, էջ 171-172.

[64] Գ. Մ. Կարոյեան, Մեծ Եղեռնի Նահատակ Հայ Բժիշկները (Անոնց Պատգամները), Պոսթոն, 1957, էջ 177.

[65] Նոյն, էջ 185-187.

[66] Սիրունի, Պոլիս, Դ. հատ., էջ 260.

[67] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Տօքտ. Վահան Բաշա Մանուէլեան», Դարման, 1920, թիւ Ը.-Թ., էջ 132.

[68] Ալպօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ, էջ 2091-2092.

[69] «Նշանաւոր Վախճանեալներ, Վահան Բաշա Մանուէլեան», Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկիչեան, 1908, էջ 413.

[70] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Անդրանիկ Բաշա Նաֆիլեան», Դարման, 1920, թիւ Թ.-ԺԱ., էջ 152-153.

[71] Վարդ Եիկահեր, «Կէսդարեան Պատմութիւն Իսթանպուլահայ Բժշկութեան. մեր Բժիշկները Հանրապետական Շրջանին», Շողակաթ Տարեգիրք, 1974-1975, Իսթանպուլ, 1975, էջ 43.

[72] Նոյն, էջ 46-47

[73] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները. Տօքթ. Յակոբ Պէյ Տաւուտեան», Դարման, թիւ Գ-Դ., էջ 14-15.

[74] Վահրամ Թորգոմեան, «Բժիշկ Տոքթ. Յակոբ Տաւուտեան 1812-1878 Կենսագրութիւն», Հանդէս Ամսօրեայ, 1898, թիւ Գ, էջ 74-78.

[75] Վահրամ Թորգոմեան, «Բժիշկ Տոքթ. Գասպար Պէյ Սինապեան», Հանդէս Ամսօրեայ, 1896, թիւ ԺԲ., էջ 330-340.

[76] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Տօքթ. Գասպար Բէյ Սինապեան», Դարման, 1920, թիւ Ա-Բ, էջ 16.

[77] Վահրամ Թորգոմեան, «Բժիշկ Տօքտ. Մկրտիչ Բառլատեան», Հանդէս Ամսօրեայ, 1899, թիւ Ժ., էջ 370-371.

[78] Եիկահեր, էջ 97-107.

[79] Վահրամ Թորգոմեան, «Բժիշկ Բարունակ Բէյ Քոթիկեան», Հանդէս Ամսօրեայ, 1895, թիւ Ժ., էջ 310-316 եւ թիւ ԺԲ., էջ 360-370.

[80] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսներ, Տօքտ. Յակոբ Պէյ Յովհաննէսեան», Դարման, 1920, թիւ Ա-Բ, էջ 15։
[81] Շիկահեր, էջ 203։
[82] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Տօքտ. Յակոբ Պէյ Խանտանեան», Դարման, 1920, թիւ Է., էջ 107-108։
[83] Մեպպուրեան, Հայ եւ Մագումով Հայ Բժիշկներ, էջ 195։
[84] Հ. Բ. Սարգիսեան, «Կոմիտաս Պէյ Մինասեան», Բագմավէպ, 1904, թիւ Է., էջ 326-334։
[85] Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ, էջ 2086։
[86] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Տօքտ. Յակոբ Պէյ Խանտանեան», թիւ Է., էջ 107-108։
[87] Վրէն Բժիշկ, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Տօքտ. Յովհաննէս Պէյ Թապիպեան», Դարման, 1920, թիւ Ը.-Թ., էջ 153։
[88] Ալպօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ, էջ 2097-2098։
[89] Շիկահեր, էջ 49
[90] Նոյն, էջ 56
[91] Նոյն, էջ 49
[92] Նոյն, էջ 149
[93] Կարոյեան, էջ 137-140
[94] Շիկահեր, էջ 44։
[95] Վահրամ Թորգոմեան, «Թուրք Անասնաբուժական Վարժարանին Հայ Դասախօսները. Տօքթ. Մինաս Պէյ Աւետիսեան», Դարման, 1921, թիւ Գ.-Դ., էջ 34-35։
[96] Հ. Պ. Զ., «Կենսագրութիւն Յովսէփ Վարդան Փաշա», Հանդէս Ամսօրեայ, 1890, թիւ Գ., էջ 62-63։
[97] Արշակ Ալպօյաճեան, «Յովսէփ Վարդան Փաշա», Երիտասարդ Հայուհի, 1954, թիւ Բ., էջ 15-19։
[98] Թորոս Ազատեան, «Յովսէփ Վարդան Փաշայի Մահուան 75ամեակը, Անտեսուած Դրուագներ իր Կեանքէն», Ժամանակ, Ստամբուլ, 1954, թիւ 16871, 16878, 16885։
[99] Եփրեմ Պօղոսեան, «Թընկրրեան Գերդաստանը», Հանդէս Ամսօրեայ, 1951, թիւ Գ.-Է., էջ 254-282 եւ 428-459։
[100] Սիրունի, Պոլիս, Դ. հատ., էջ 295-296։
[101] «Թորոս-Գիսակ Պէյ», Արարատ, 1873, թիւ Է., էջ 280։
[102] Եփրեմ Պօղոսեան, «Կարապետ Արթին Փաշա Տաւուտեան Կուսակալ եւ Ընդհանուր Կառավարիչ Լիբանանի», Հանդէս Ամսօրեայ, 1949, թիւ Ա.-Գ., էջ 54-100։
[103] Հ. Յ. Ֆ. «Կարապետ Տաւուտ Փաշա Արթինեան», Հանդէս Ամսօրեայ, 1964, թիւ Ժ.-ԺԲ., էջ 542-550։
[104] Սիսակ Յակոբ Վարժապետեան, Հայերը Լիբանանի մէջ, Ա. հատ., Պէյրութ, Բ. տպ., Համազգայինի Վահէ Սէթեան Տպարան, 1982, էջ 212։
[105] Եփրեմ Պօղոսեան, «Յովհաննէս Փաշա Գուլումճեան Վերջին Հայազգի Կառավարիչ Լիբանանի», Հանդէս Ամսօրեայ, 1951, թիւ Ա.-Բ., էջ 83-93։
[106] Վարժապետեան, էջ 192-214։
[107] Վահրամ Թորգոմեան, «Թուրք Բժշկական Վարժարանին Հայ Դասախօսները, Յովսէփ Ճէլալեան», Դարման, թիւ ԺԲ., էջ 166, նաեւ՝ Ա. Ն. Մեպպուրեան, Հայ եւ Մագումով Հայ Բժիշկներ, Աշխարհագրական Համառօտ Անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940, էջ 116։

[108] Լէօ, Երկերի ժողովածու, Գ. Հատ., Երեւան, «Հայաստան», 1969, էջ 237.
[109] Լէօ, Երկերի ժողովածու, Դ. Հատ., Երեւան, «Հայաստան», 1984, էջ 107-108.
[110] Ալպօյաճեան, «Ազգային Սահմանադրութիւնը», էջ 176.
[111] Լեւոն Վարդան, Հարկերը, էջ 483-484.
[112] Յակոբ Սիրունի, Պոլիս, Բ. Հատ., էջ 360-366.
[113] Հայ ժողովրդի Պատմութիւն, էջ 307.
[114] Խաչիկ Սարաջեան, Հայոց Դերը Թուրքիոյ մէջ, Երեւան, 2000, էջ 25.
[115] «Զինուորագրութիւնը Թուրքիայում», Մշակ, Թիֆլիս, 1877, թիւ 42, 48, 63, 93, 95.
[116] Յակոբ Սիրունի, Պոլիս Եւ Իր Դերը, Գ հատոր, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987, էջ 514-515.
[117] «Հայոց Զինուորական Ծառայութեան Հարցը Տաճկաստանում», Մշակ, Թիֆլիս, 1878, թիւ 6.
[118] Ալպօյաճեան, «Ազգային Սահմանադրութիւնը», էջ 170-172.
[119] Վահէ Հայկ, էջ 661-662.
[120] Գ. Սիւրմէնեան, Տաճկահայ Զինուոր եւ Զինուորականութիւնը, Պէյրութ, Տպարան Համազգային, 1967, էջ 12.
[121] Արամ Անտոնեան, Պատկերազարդ Ընդարձակ Պատմութիւն Պալքանեան Պատերազմին, Կ. Պոլիս, 1912-1913, էջ 890-893.
[122] Այլ տուեալներով՝ մինչեւ 300 հազար.
[123] Ալպօյաճեան, Պատմութիւն Մարաթիոյ, էջ 927.
[124] Զոն Կիրակոսեան, Առաջին Համաշխարհային Պատերազմը եւ Արեւմտահայութիւնը 1914-1916 թթ., Երեւան, «Հայաստան», 1967, էջ 259-273.
[125] Լեւոն Վարդան, Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի 1915-1923, Պէյրութ, Ատրաս, 1975, էջ 29.
[126] Արամ Անտոնեան, Մեծ Ոճիրը. Հայկական Վերջին Կոտորածները եւ Թալէաթ Փաշա, Երեւան, Արեւիկ, 1990, էջ 232-233.
[127] Էդուարդ Զրբաշեան, Ռուբէն Սեւակ, Երեւան, Միտք Հրատարակչութիւն, 1965, էջ 103.
[128] Հայ Բժշկութեան Տուած Զոհերը. Յուշակագրուած Վաւերական Փաստերով, Կ. Պոլիս, 1919, տպգր. «Արձագանգ»ի, էջ 5-6.

THE ARMENIANS IN THE OTTOMAN ARMY (AN OVERVIEW FROM THE XIV CENTURY TO 1918)

(Summary)

ANAHIT ASTOYAN

As untrustworthy elements, the Christians of the Ottoman Empire were not recruited by the army. Moreover, according to the Shariaa law, as infidels, they were not entitled to fight in the army of the believers. However, in order to use the military capability of these Christians and due to the increasing needs of the army, the Ottoman authorities forcefully recruited the strongest, most handsome, healthy and clever Christian teenagers and, after forced islamization, sent them to the Janissaries' units.

It is not clear how many of the Janissaries were Armenians. For three centuries, however, the *devshirme* system appropriated the best of the Armenian generations from their natural milieu to serve the Ottoman Empire and its religion.

The Armenians served in the land and sea units of the Ottoman army in different ways. Concurrently, throughout centuries, the financial contribution of the Christians to the strengthening of the Ottoman army was huge. This was done through taxes and levies, which Muslims did not have.

The basic provisioners of the Ottoman army were Armenian merchants. On another note, for centuries, large numbers of Armenian artisans permanently served the Ottoman land and sea military units. These merchants and artisans were an inseparable part of the army and accompanied it during military action.

As a result of the provisions of the *Tanzimat* (promulgated in 1839) and due to the scarcity of Turkish physicians, as of the mid-19th century Armenian physicians were given the chance to serve the Ottoman army. Some 170 high ranking Armenian officers were awarded the titles of bey and pasha. Other Armenians serving in other power holding ministries, as well as the Armenian governors of Mount Lebanon, were awarded these highest military titles too.

Military career was made available to the Armenians in 1908 with the proclamation of the Ottoman Constitution, under which Armenians and other Christian representatives of the Ottoman parliament demanded that military service in the Ottoman army should be equal to all. Both during the Balkan War and WWI Armenian soldiers fought courageously and were acknowledged by high Turkish military officers. However, during WWI, to implement their preplanned massacre of the Armenians, the Turkish authorities annihilated the militarily-able Armenians.

Turkish historiography denied the centuries-old Armenian effort to strengthen the Ottoman army and claimed that only the Turks and the other Moslem peoples of the Ottoman Empire fought for the Ottoman state. However, the above-mentioned undeniable facts show that Armenians as soldiers, artisans, provisioners, physicians and state administrators served in the Ottoman army for centuries and contributed to its strengthening.

Ստեփան փաշա Ասլանեան

Թորոս բէյ Գիսակ

Յովհաննէս փաշա Գումրուեան

Գրիգոր բէյ Թագուորեան

Անտոն Եաւէր փաշա
Թրնկլրեան

Անդրանիկ փաշա Կրճիկեան

Վահան փաշա Մանուէլեան

Կոմիտաս բէյ Մինասեան

Մանուկ բէյ Միրզայեան

Անտոն փաշա Նաֆիլեան

Տիգրան փաշա Պապայեան

Գաբրիել փաշա Սեւեան

Գասպար բէյ Սինապեան

Յովսէփ Վարդանեան
(Վարդան փաշա)

Կարապետ փաշա Տաւուտեան

Յակոբ բէյ Տաւուտեան
(Տաւուտ բէյ)

Յակոբ բէյ Տատրեան

Արթին բէյ Տելէբեան

Տիրան փաշա Փափազեան

Տիգրան փաշա Փեշտիմալճեան

Բարունակ բէյ Ֆերուխան

Յակոբ Սիրունին (ներքեւում, ձախից երրորդը) օսմանեան բանակի պահեստի հայ սպաների հետ, 1914 թ.

Հարբիէի Զինուորական Վարժարանի սեբաստացի հայ ուսանողներ

Հարբիէի Զինուորական Վարժարանի հայ ուսանողներ